

Հ ա ղ ո թ դ ու մ
Հայաստանի Հանրապետության
դատախազության 2012 թվականի
գործունեության մասին

Մեծարգո նախագահ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ներպետական և միջազգային համապատասխան իրավական ակտերով, 2012թ. ընթացքում բավարար ծանրաբեռնվածությամբ աշխատանքներ է կատարել հանցավորության կանխարգելման ու վերլուծության, հանցագործությունների բացահայտման, քննության որակն ու արդյունավետությունը բարելավելու, դատարանում մեղադրանքի պաշտպանության, քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, դատական ակտերի բողոքարկման, պետական շահերի պաշտպանության, պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, կազմակերպական-վերահսկողական, միջազգային համագործակցության, ինչպես նաև դատախազական գործունեության մյուս ոլորտներում: Գործունեության առավել կարևորություն ներկայացնող հարցերով կատարվել են ուսումնասիրություններ ու վերլուծություններ, որոնց արդյունքները քննարկվել են դատախազության կոլեգիայի նիստերում ու համապատասխան խորհրդակցություններում, և այդ արդյունքներով կազմված ու համապատասխան ակտերում ամրագրված կանխորոշումները կարևոր նշանակություն են ունեցել դատախազական գործունեության կազմակերպման և դատախազական լիազորությունների իրականացման արդյունավետության ապահովման, ինչպես նաև քրեական պետական քաղաքականության մշակման և իրականացման համար:

2012թ. գրանցվել է հանցագործության 15776 (2011թ.՝ 16572) դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 796-ով, նվազումը կազմել է 4,8%, դրանով պայմանավորված՝ 485-ով նվազել է բնակչության 100 հազար բնակչին բաժին ընկնող հանցագործությունների թիվը: Հանցագործությունների նվազմանը զուգահեռ հուսադրող պետք է համարել հանցագործությունների ընդհանուր բացահայտման կայուն վիճակը: Արձանագրված դեպքերից բացահայտվել է 13646-ը, 2130-ը չի բացահայտվել (2011թ.-ին 14287 դեպքից չի բացահայտվել 2285-ը): 2012թ.-ին բացահայտումը կազմել է 85,9% (2011թ.՝ 85,4%):

Հարկ է ընդգծել, որ, թեև, վերջին տարիներին արձանագրված հանցագործությունների թիվն աճել է, այդուհանդերձ, ընդհանուր հանցավորության շարժընթացում հանցագործությունների աճի կամ նվազման միտումները, ըստ հաշվետու տարբեր ժամանակահատվածների, հարաբերական են: Մասնավորապես, 2011 թվականի ընթացքում գրանցվել է 2010թ.-ի համեմատությամբ հանցագործությունների աճ 7,1%-ով կամ 1095 դեպքով, նույնը նաև 2010 թվականի ընթացքում՝ 2009թ.-ի համեմատությամբ՝ հանցագործությունների աճ 7,9%-ով կամ 1138 դեպքով, 2009թ. ընթացքում 2008թ.-ի համեմատությամբ՝ հանցագործությունների աճ 54,7%-ով կամ 5068 դեպքով:

Վերջին անգամ, բացի հաշվետու ժամանակաշրջանից, հանցավորության շարժընթացում հանցագործությունների թվի նվազում արձանագրվել է 2008 թվականին:

2012թ. 1037 դեպքով կամ 29,6%-ով աճել են մարդու դեմ ուղղված հանցագործությունները (3499-4536)՝ կազմելով արձանագրված հանցագործության դեպքերի 28,7%-ը: Ընդ որում՝ դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերն աճել են 281-ով (1359-1640), թրաֆիքինգինը՝ 3-ով (16-19), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները՝ 34-ով (71-105), ծեծի կամ այլ բռնությանը՝ 678-ով (1585-2263): Դրա հետ մեկտեղ, 10-ով նվազել են սպանության (60-50) և 4-ով սպանության փորձի դեպքերը (29-25):

Սպանության դեպքերից 19-ը (2011թ.՝ 17) փաստացի դեռևս չի բացահայտվել, այսինքն՝ բացահայտումը կազմել է 62% (2011թ.՝ 71,6%): Արձանագրված սպանության փորձերի բացահայտումը կազմել է 88% (2011թ.՝ 82,7%): Ինչ վերաբերում է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի բացահայտմանը, ապա հաշվետու ժամանակահատվածում արձանագրված 170 դեպքից չի բացահայտվել 27-ը, կամ բացահայտվել է 84,1%-ը (2011թ.՝ 82,9%):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների կտրվածքով երկրում հանցավորության վիճակի հանգամանալից վերլուծությունը ցույց է տվել, որ հանցատեսակների մեծ մասի դեպքերի աճը որոշակիորեն պայմանավորված է ՀՀ ոստիկանության մարմինների կողմից հանցագործությունների հաշվառման, գրանցման գործընթացի բարելավմամբ, այդ հանցագործությունների լատենտայնության նվազմամբ: Եթե նախկինում հանցագործություն կատարած անձանց և տուժողների փոխհարաբերությունները, տարբեր կենցաղային հարցերի շուրջ ծագած վեճերը դուրս են մնացել ոստիկանության ստորաբաժանումների, այդ թվում՝ տեղամասային տեսուչների, անչափահասների գործերով տեսչության աշխատակիցների տեսադաշտից և նախականխման բավարար աշխատանքներ չեն իրականացվել, ապա ներկայումս այդ հարցում որոշակի դրական տեղաշարժ է նկատվում:

Դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառելու դեպքերի աճը պայմանավորված է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ, այն է՝ մի շարք դեպքեր, որոնք նախկինում որակվել են որպես խուլիգանություն, ներկայումս դատարաններ են ուղարկվել որպես դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառելու դեպքեր:

2012թ. աճել են նաև թրաֆիքինգի դեպքերը: Թրաֆիքինգը դասվում է ոչ ակներևության պայմաններում կատարվող այն հանցագործությունների շարքին, որի հատկապես սկզբնական փուլերը (հավաքագրման, փոխադրման և այլն) աչքի են ընկնում հանցավորի իրական նպատակների քողարկմամբ, մոլորության մեջ գտնվող տուժողների կողմից հոժարակամ և գիտակցված վարքագծի դրսևորմամբ, իսկ այդ գործողությունների հանցավոր բնույթը մեծամասամբ ի հայտ է գալիս հանրորեն վտանգավոր հետևանքները վրա հասնելուց հետո: Եթե դրան ավելացնենք այն հանգամանքը, որ շատ դեպքերում ոչ միայն հանցագործները, այլ նաև տուժողներն ու վկաները, տարբեր դրդապատճառներից ելնելով (վրեժխնդիր լինելուց վախենալու, միակ աշխատանքը չկորցնելու, ամոթից դրդված, ստանձնած պարտավորությունները կատարելու մղումից և այլն), շահագրգռված չեն հանցագործությունը բացահայտելու հարցում, ապա պարզ կդառնա թրաֆիքինգի դեպքերի քողարկվածության աստիճանը, որն էլ, իր հերթին, զգալի դժվարություններ է ստեղծում դրա դեմ պայքարի աշխատանքները կազմակերպելիս: Նշված պատճառները վկայում են, որ այդ բնույթի դեպքերի աճը, ըստ էության, խոսում է ոչ թե սոսկ այդ դեպքերի արձանագրման աճի, այլ քրեական հետապնդման մարմինների դրական աշխատանքի շնորհիվ այդպիսի դեպքերի բացահայտման ցուցանիշների աճի մասին: Մեր երկրում քննարկվող խնդրով զբաղվող շահագրգիռ հասարակական, միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները ևս վկայում են, որ վերջին տարիներին հանրապետությունում էապես նվազել է թրաֆիքինգի ռիսկայնությունը: Դա պայմանավորված է այդ երևույթի մասին բնակչության՝ հատկապես խոցելի խմբերի իրազեկության բարձրացմամբ, ինչպես նաև թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ

խիստ պատժողական քաղաքականություն գործադրելու միջոցով ընդհանուր կանխարգելիչ մթնոլորտի ձևավորմամբ:

2012թ. դատախազական հսկողություն է իրականացվել մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված 12112 (2011թ.՝ 10113) նյութի նկատմամբ, որը 1999-ով կամ 19,7%-ով ավելի է նախորդ տարվանից:

2012թ. նախապատրաստված 12112 նյութից 1015-ով կամ 8,4%-ով հարուցվել են քրեական գործեր:

2012թ. մարդու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հարուցված և վարույթը ավարտված 837 (2011թ.՝ 863) քրեական գործի նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն, որոնցից 457-ը կամ 54,6%-ը՝ 564 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, այդ թվում՝ 16 (2011թ.՝ 28) քրեական գործ ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ, 364-ի (2011թ.՝ 404) կամ 43,5%-ի (2011թ.՝ 46,8%) վարույթը կարճվել է, 238 (2011թ.՝ 212) քրեական գործի վարույթ կասեցվել է:

2012թ. մեղադրական եզրակացությամբ դատարաններ է ուղարկվել 457 (2011թ.՝ 434) քրեական գործ՝ 564 (2011թ.՝ 529) անձի վերաբերյալ, որից հաշվետու ժամանակահատվածում դատական քննությունն ավարտված 431 (2011թ.՝ 423) գործով դատի տրված 518 (2011թ.՝ 513) անձից դատապարտվել է 412-ը՝ 359 գործով, 2 գործով 6 անձ արդարացվել է, 12 գործով 12 անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են կիրառվել, 1 անձի նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց, իսկ 87 անձի վերաբերյալ 58 գործի վարույթ դատարանի կողմից կարճվել է, որից 35 գործով՝ 43 անձի նկատմամբ քրեական գործը կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, 1 գործ՝ 1 անձ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով, 22 գործ՝ 43 անձ՝ այլ հիմքերով:

2012թ. դատապարտված 412 անձից 213-ը կամ 51,8%-ը դատապարտվել է ազատազրկման, որոնցից 128-ը կամ 31%-ը՝ տուգանքի, 12-ը կամ 1,2%-ը՝ կալանքի, 59-ի կամ 14,4%-ի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածով սահմանված կարգով պատիժը պայմանական չի կիրառվել, 8-ի կամ 1,9%-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը:

2012թ. ընթացքում դատարանում ավարտված 127 (2011թ.՝ 122) քրեական գործով 143 (2011թ.՝ 142) անձի վերաբերյալ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

2012թ. ընթացքում դատապարտվել է 17 (2011թ.՝ 11) անչափահաս՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններ կատարելու համար:

Դատարանում մեղադրանքից հրաժարվելու դեպքեր չեն եղել:

2012թ. արձանագրվել է **սեփականության դեմ ուղղված հանցագործությունների** 8 դեպքով կամ 0,1%-ով աճ (5810-5802): Դեպքերի աճին գուցահեռ բացահայտման ցուցանիշը նվազել է 2,1%-ով՝ կազմելով 72,1% (2011՝ 74,2%):

2012թ. գրանցված 14969 (2011թ.՝ 15648) հանցագործության դեպքի զանգվածում անձնական գույքի հափշտակությունների 5142 (2011թ.՝ 5114) դեպքի տեսակարար կշիռը 34,4% (2011թ.՝ 32,7%) է, իսկ սեփականության դեմ ուղղված հանցագործություններինը՝ 88,5% (2011թ.՝ 88,1%):

Սակայն, ինչպես սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, այնպես էլ անձնական գույքի հափշտակությունների մասով, հանցավորության շարժընթացում տեղի է ունեցել 28 դեպքով կամ 0,5%-ով (5142-5114) աճ՝ 70,7% (2011՝ 72,7%) բացահայտման ցուցանիշով:

Գողության դեպքերի 153-ով (901-1054) նվազման պարագայում բնակարանային գողության դեպքերն աճել են 153-ով, կամ 17%-ով: Միաժամանակ, բնակարանային գողության դեպքերով բացահայտման ցուցանիշը բարելավվել է 2%-ով, բացահայտումը կազմել է 49,7% (2011՝ 47,7%):

Մեփականության դեմ ուղղված հանցագործությունների «աշխարհագրությունը» չի փոփոխվում և, ինչպես նախորդ տարվա, այնպես էլ 2012թ. ընթացքում, այն ընդգրկում է մայրաքաղաքի և հարակից մարզերի տարածքները: Բազմիցս բարձրաձայնվել է, որ հանցավոր անցյալ և հակումներ ունեցող անձինք իրենց ապրելակերպով, հանցավոր կապերով, վարքագծով շարունակում են դուրս մնալ ոստիկանության օպերատիվ ծառայությունների տեսադաշտից, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում այս տեսակի հանցագործությունների դեպքերի ավելացման և տուժողներին պատճառված հսկայական նյութական վնասը չհատուցելու համար:

Հանցավոր աշխարհի տրամադրության տակ եղած խոշոր միջոցները նրանց դարձնում են առավել վտանգավոր, հանդուգն ու անպատժելի, պայմաններ են ստեղծում հրազեն ու հանցագործության այլ միջոցներ ձեռք բերելու և ազատ տեղաշարժվելու համար:

Հանցավորության այս դրսևորումների՝ խմբերի գոյության դեմ վճռական պայքար պետք է ծավալել օպերատիվ իրադրության առողջացման և հանցագործությունների նախականիսման առումով:

Այնհայտ է, որ գողությունների վերաբերյալ գործերով գողոնի հայտնաբերման և գողության դեպքերի հաջող բացահայտման գրավականներից է օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետ իրականացումը ապրանքների իրացման տարբեր վայրերում: Սակայն, որպես կանոն, իրացման վայրերից դեպքեր գրեթե չեն բացահայտվել կամ էլ բացահայտումները եղել են տուժողների ակտիվ միջամտության շնորհիվ ու նրանց նախաձեռնությամբ:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում, ՀՀ տարածքում, այդ թվում՝ Երևան քաղաքում, գրանցված բնակարանային գողությունների գերակշիռ մասը կատարվել է հարմարեցված բանալու կամ տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտքի դուռը բացելու եղանակով, սակայն քիչ չեն նաև պատուհանից, այդ թվում՝ բաց պատուհանից կամ պատշգամբից մուտք գործելու միջոցով կատարված գողության դեպքերը:

Երևան փոփոխություններ են արձանագրվել ավազակային հարձակման դեպքերի շարժընթացում՝ 2012թ. ընթացքում ՀՀ-ում գրանցվել է ավազակային հարձակման 63 (2011՝ 106) դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 43-ով, կամ 40,6%-ով: Բարելավվել է նաև բացահայտման ցուցանիշը, որը կազմել է 71,4% (2011՝ 67,9%):

2012թ. ընթացքում գրանցված կողոպուտի դեպքերն աճել են 10-ով կամ 4,2%-ով (247-237), միաժամանակ բարելավվել է բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 60,3% (2011՝ 47,7%):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կողոպուտի առավել տարածված ձև շարունակում է մնալ բջջային հեռախոսների և անձանց կողմից կրվող ոսկյա զարդերի բացահայտ հափշտակումը, որի նախականիսման և դեպքերի բացահայտման նպատակով ոստիկանության մարմինների համապատասխան ծառայությունները պետք է ակտիվ միջոցառումներ իրականացնեն մարդաշատ վայրերի, մասնավորապես՝ շուկաների, տոնավաճառների, ավտոկանգառների տարածքներում:

2012թ. արձանագրվել է խարդախությամբ գույքի հափշտակության 161 դեպքով կամ 22,9%-ով (864-703) աճ, խարդախությամբ անձնական գույքի հափշտակության արձանագրված 864 դեպքից 836-ը բացահայտվել է, բացահայտումը կազմել է 96,8%:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս շարունակվում է քաղաքացիաիրավական վեճերի վերաբերյալ դատական ատյաններում քննված գործերի արդյունքներից դժգոհ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների հիման վրա նախապատրաստված նյութերով, ինչպես նաև խարդախությամբ մանր չափերով հափշտակության վերաբերյալ ակնհայտ անհիմն քրեական գործերի հարուցման արատավոր երևույթը, որոնք դատական հեռանկար չեն կարող ունենալ և քննության արդյունքում կարճվում են հանցակազմի կամ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Նշված երևույթները վկայում են դատավարական ղեկավարների կողմից նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության

օրինականության նկատմամբ ոչ պատշաճ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացնելու մասին: 2012թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում ավարտված խարդախության վերաբերյալ 263 գործից 64-ը կարճվել է արդարացման հիմքով, որը կազմում է ավարտված քրեական գործերի 24,3%-ը:

2012թ. արձանագրվել է **տնտեսական գործունեության դեմ ուղղված** գրանցված հանցագործությունների նվազում 342 դեպքով կամ 30,8%-ով (770-1112), բացահայտումը կազմել է 86,6% (2011՝ 74,5%): Նվազումը արձանագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների բոլոր հանցատեսակներով, այդ թվում՝ ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության 30 (2011՝ 39) և մաքսանենգության 52 (2011՝ 103) դեպք, կեղծ փողեր, արժեթղթեր պատրաստելու, պահելու, իրացնելու 95 (2011՝ 280) դեպք:

Ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության և մաքսանենգության դեպքերի նվազումը բնավ չի նշանակում, թե իրականում նվազել են այդ բնույթի հանցագործությունները: Նշված հանցագործությունների շարժընթացում արձանագրված փոփոխությունը պայմանավորված է համապատասխան ծառայությունների կողմից իրականացված միջոցառումների ոչ բավարար մակարդակով և դեպքերի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ցածր արդյունավետությամբ: Նշված դեպքերի հայտնաբերման և բացահայտման արդյունավետության գրավականը քննչական ու օպերատիվ մարմինների պատշաճ փոխհամագործակցությունն է, ինչը, սակայն, ոչ միշտ է ապահովվում: Այդ նպատակով առանձնահատուկ կարևորվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և ոստիկանության համապատասխան ծառայությունների միջև տեղեկատվական բազայի փոխադարձ մատչելիությունը, որի ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ:

2012թ. գրանցվել է կեղծ փողեր պատրաստելու և իրացնելու 95 (2011՝ 280) դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 185-ով կամ 66,1%-ով: Հիշյալ 95 դեպքից բացահայտվել է ընդամենը 2-ը, այսինքն՝ բացահայտումը կազմել է ընդամենը 2,1% (2011՝ 5%):

Թեև արձանագրվել է նշված բնույթի դեպքերի էական նվազում, սակայն դա դեռ չի նշանակում, թե նվազել է կեղծ մետաղադրամների ու թղթադրամների շրջանառությունը: Այդ պատճառով որոշում է կայացվել կեղծ մետաղադրամների վերաբերյալ քննվող քրեական գործերը բաժանել խմբերի և մույն խմբի կեղծ մետաղադրամներով նախաքննությունը կատարել մեկ վարույթում: Խիստ մտահոգիչ է նաև այս բնույթի գործերի բացահայտման վիճակը: Ընդ որում, նման վիճակը կրկնվում է տարիներ շարունակ՝ արձանագրված բազմաթիվ դեպքերի պարագայում բացահայտվում են եզակի դեպքեր:

2012թ. նախապատրաստված 7542 (2011թ.՝ 7844) նյութից 3353-ով (2011թ.՝ 3599) հարուցվել է քրեական գործ, 3345-ով (2011թ.՝ 2715) քրեական գործի հարուցումը մերժվել է, 844 (2011թ.՝ 858) նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, իսկ 483-ը (2011թ.՝ 672) մնացել է անավարտ:

2012թ. քննված 4654 (2011թ.՝ 5833) քրեական գործից 1220-ի (2011թ.՝ 1323) նախաքննությունն ավարտվել է, որոնցից 450-ի (2011թ.՝ 427) վարույթը կարճվել է, իսկ 761-ը՝ 1072 անձի (2011թ.՝ 884 գործ, 1255 անձ) նկատմամբ, ուղարկվել է դատարան, 2048 (2011թ.՝ 2567) քրեական գործով վարույթը կասեցվել է՝ 1893-ը (2011թ.՝ 2395) հանցագործություն կատարած անձը հայտնի չլինելու, 147-ը (2011թ.՝ 160)՝ մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու հիմքով, իսկ 8-ը (2011թ.՝ 12)՝ անհաղթահարելի ուժի հիմքով:

2012թ. դատարան ուղարկված քրեական գործերով դատական քննությունն ավարտվել է 717 գործով՝ 1006 անձի (2011թ.՝ 920 գործ, 1282 անձ) վերաբերյալ, որոնցից 654 գործով 931 անձ (2011թ.՝ 831 գործ, 1173 անձ) դատապարտվել է, 9 գործով 9 անձ (2011թ.՝ 10 գործ, 16 անձ) արդարացվել, 2 գործով 2 անձի նկատմամբ կիրառվել են դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ, 5 գործով 5 անձի (2011թ.՝ 13 գործ, 14 անձ) նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ 53 անձի վերաբերյալ 47 քրեական գործով (2011թ.՝ 66 գործ, 79 անձ) վարույթը կարճվել է, որից 25 գործով՝ 28 անձի նկատմամբ քրեական գործը կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, 2 գործ՝ 2 անձ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի

1-ին մասի 13-րդ կետի հիմքով, 2 գործ՝ 2 անձ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերի և 2-րդ մասի հիմքով, 2 գործ՝ 2 անձ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, 16 գործ՝ 19 անձ՝ այլ հիմքերով:

Դատապարտված 931 անձից 559-ը (2011թ.՝ 784) կամ 60%-ը (2011թ.՝ 66,8%) դատապարտվել է ազատազրկման, 7-ը (2011թ.՝ 4) կամ 0,7%-ը (2011թ.՝ 0,3%)՝ կալանքի, 227-ը (2011թ.՝ 204) կամ 24,4%-ը (2011թ.՝ 17,4%)՝ տուգանքի, 138-ի (2011թ.՝ 181) կամ 14,8%-ի (2011թ.՝ 15,4%) նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան:

Դատապարտված անձանցից 4-ի (2011թ.՝ 6) նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածի կիրառմամբ, 17-ի (2011թ.՝ 13) պատիժը կրճատվել է, իսկ 65-ը (2011թ.՝ 293) պատժից ազատվել է համաներման ակտի հիման վրա:

Դատապարտվածներից 20-ը (2011թ.՝ 47) կամ 2,1%-ը (2011թ.՝ 4%) ազատվել է նախնական կալանքից՝ ազատազրկման հետ կապ չունեցող պատժի նշանակմամբ: Նախնական կալանքի տակ չգտնված անձանցից 77-ը (2011թ.՝ 113) կամ 8,1%-ը (2011թ.՝ 9,6%) դատապարտվել է ազատազրկման:

2012թ. սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դատարանում քննված քրեական գործերից 286-ով 401 անձի նկատմամբ (2011թ.՝ 447 գործ, 611 անձ) կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

2012թ. սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով պետությանը պատճառվել է 359.218.457 (2011թ.՝ 335.519.503) դրամի նյութական վնաս, որից վերականգնվել է 145.432.770 (2011թ.՝ 146.386.015) դրամը:

2012թ. **ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիրերհանցագործությունների գործերով վարչությունը** հսկողություն է իրականացրել ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում նախապատրաստված 183 նյութի (2011թ.՝ 233) նկատմամբ, որոնցից 113-ով (2011թ.՝ 128) հարուցվել են քրեական գործեր, 56-ով (2011թ.՝ 93) մերժվել է քրեական գործի հարուցումը, այդ թվում՝ հանցակազմի կամ հանցադեպի բացակայության հիմքով՝ 33-ը (2011թ.՝ 48), ոչ արդարացման հիմքով՝ 23-ը (2011թ.՝ 45), 14 նյութ ընթացքում է:

2012թ. վարույթ է ընդունվել 136 (2011թ.՝ 158) գործ, այդ թվում՝ հարուցվել է 113-ը (2011թ.՝ 128), ավարտվել է 83 (2011թ.՝ 103) քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 59-ը (2011թ.՝ 74) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար, 24 (2011թ.՝ 29) քրեական գործի վարույթ կարճվել է, քննչական ենթակայության կարգով այլ մարմիններ է ուղարկվել 10-ը (2011թ.՝ 24), 6 (2011թ.՝ 3) քրեական գործի վարույթ միացվել է, իսկ 43-ի վարույթը կասեցվել (2011թ.՝ 35), այդ թվում՝ մեղադրյալների քննությունից թաքնվելու հիմքով՝ 16-ը (2011թ.՝ 11), այլ հիմքերով՝ 11-ը (2011թ.՝ 9), իսկ հանցագործությունը չբացահայտվելու հիմքով՝ 16-ը (2011թ.՝ 15):

2012թ. հունվարի 1-ի դրությամբ անավարտ է մնացել 49 (2011թ.՝ 49) քրեական գործ:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) վերաբերյալ 2012թ. ընթացքում հանրապետությունում, ընդհանուր առմամբ, նախաքննական մարմինների վարույթում քննվել է 17 քրեական գործ (2011թ.՝ 14):

2012թ. ընթացքում 63 գործով 105 անձի նկատմամբ (2011թ.՝ 69 գործ, 148 անձ) պաշտպանվել է մեղադրանքը դատարանում և նշված գործերով ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 72 անձի (2011թ.՝ 110) նկատմամբ, 1-ի նկատմամբ՝ ցմահ, 1-ի նկատմամբ՝ կալանք (2011թ.՝ 0), 20-ի նկատմամբ՝ տուգանք (2011թ.՝ 21), ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն պատիժ չի կիրառվել 7-ի նկատմամբ (2011թ.՝ 2), համաներման կիրառմամբ նշանակված պատիժներից ազատվել է 20-ը (2011թ.՝ 36):

2012թ. ընթացքում ընդհանուր իրավասության դատարաններում արագացված դատական քննության կարգով քննվել է 35 գործ 54 անձի նկատմամբ (2011թ.՝ 30 գործ, 43 անձ):

2012թ. ընթացքում պետությանն ընդհանուր առմամբ պատճառվել է 1.047.061.420 (2011թ.՝ 1.438.198.358) դրամի գույքային վնաս, որը հիմնականում առաջացել է մաքսանենգության դեպքերով, որից վերականգնվել է 772.461420 (2011թ.՝ 856.185.080) դրամը:

Նշված ոլորտում կատարված աշխատանքների շնորհիվ Եվրոպայի Խորհրդի ՄԱՆԻՎԱԼ-ի հանձնախմբի 2012թ. դեկտեմբերի 3-ի 40-րդ լիազումար նիստում հաստատվեց Հայաստանի Հանրապետության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի երրորդ առաջընթացի հաշվետվությունը:

Հաստատված հաշվետվությունն արձանագրում է երկրի առաջընթացը, մասնավորապես, հետևյալ ուղղություններով.

- Ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի նախագծերը, ընդունման դեպքում, կապահովեն ահաբեկչության և ահաբեկչության ֆինանսավորման հասկացությունների, ինչպես նաև հանախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերի համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

- Վճռաբեկ դատարանի կողմից 2011թ.-ին ընդունված որոշումը հնարավոր է դարձնում փողերի լվացման հանցակազմով դատավճիռների կայացումը՝ առանց նախորդող հանցագործության համար նախկինում կամ միաժամանակյա դատավճռի անհրաժեշտության:

- Երկիրն արդյունավետորեն համակարգում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվությունների տրամադրումը, ինչպես նաև առաջընթաց է արձանագրել փողերի լվացման հանցակազմով գործերի քննության հարցում:

Հաշվետվության համաձայն՝ կարևոր առաջընթացների թվում հիշատակվում են նաև 2013-2015թթ. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ազգային ռազմավարության ընդունումը, հաշվետվություն տրամադրող անձանց, իրավապահ և վերահսկող մարմինների, ինչպես նաև ֆինանսական հետախուզության մարմնի համար կազմակերպված դասընթացների և համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված այլ քայլեր: Համաձայն հանձնախմբի ընթացակարգերի՝ երկիրը հաջորդ հաշվետվությունը կներկայացնի երկու տարի անց:

Հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված նոր հանցատեսակների դեմ պայքարի միջազգային փորձը, միջազգային մասնագիտացված կառույցների համապատասխան պահանջները, դրանցով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով նյութերի նախապատրաստման, քրեական գործերի քննության առանձնահատկությունները, տվյալ հանցատեսակի դեմ պայքարի արդիականությունն ու զարգացման միտումները, նոր մարտահրավերներին պատշաճ կերպով դիմակայելու անհրաժեշտությունը, որոնք պահանջում են նաև հատուկ մասնագիտական գիտելիքների իմացություն և պարբերական վերապատրաստություն, ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ և 251-257-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների գործերով նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության լիազորությունը և վերահսկողության գործառնության իրականացումը դրվել է ՀՀ գլխավոր դատախազի 06.04.2012թ. N 15 հրամանով վերանվանված՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիրբերհանցագործությունների գործերով մասնագիտացված վարչության վրա: Նույն նկատառումներից ելնելով, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության կազմում գործող համապատասխան վարչության դատախազների հետ անմիջականորեն աշխատելու,

դատախազական հսկողությունն ու տվյալ հանցատեսակի բացահայտելիությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազության առաջարկով, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության կազմում առանձնացվել են 2 փորձառու քննիչ, որոնք պետք է մասնագիտանան բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված հանցատեսակների գործերով քննության մեջ:

Այդ առումով 2012թ. արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիրքերհանցագործությունների գործերով վարչությունը դատավարական ղեկավարում է իրականացրել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ համապատասխան ստորաբաժանումում նախապատրաստված 27 նյութով և քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում քննված 14 քրեական գործով, որոնց ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ առավել հաճախ արձանագրվել են համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակություններ, այդ թվում՝ խարդախություններ ու շորթումներ: Վերջիններիս պարագայում պարարտ հող են ազգաբնակչության շրջանում լայն տարածում գտած սոցիալական ցանցերը, մասնավորապես՝ «odnoklassniki.ru»-ն, «vkontakte.ru»-ն, «mamba.ru»-ն, «facebook.com»-ը և այլն: Ընդ որում, զոհերից, որպես կանոն, գումար են շորթել նրանց մասնակցությամբ պոռնկագրական բնույթի լուսանկարներ կամ արատավորող այլ տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով: Գրանցվել են նաև այս կամ այն ծառայությունների մատուցման կամ ապրանքների մատակարարման պատրվակով օգտատերերի վստահությունը չարաշահելու եղանակով խարդախությամբ գումարներ հափշտակելու դեպքեր, որոնց կատարողները գործել են արտերկրից: Մասնավորապես՝ հաճախորդներին վճարման են ներկայացվել ապրանքների իրական մատակարարի հետ որևէ առնչություն չունեցող բանկային հաշվեհամարներ, որի արդյունքում հափշտակվել են առանձնապես խոշոր չափերի գումարներ:

Որոշակի միջոցներ են ձեռնարկվել նաև ՀՀ գլխավոր դատախազության կիրքերհանցագործությունների դեմ պայքարում մասնագիտացված վարչության դատախազների որակավորման բարձրացման առումով: Դատախազները ներգրավվել են Եվրախորհրդի կողմից կազմակերպված՝ «Համագործակցությունը կիրքերհանցագործության դեմ պայքարում» խորագրով գիտաուսումնական հավաքներին և կոնֆերանսներին, առաջավոր փորձի ուսումնասիրության և ընդօրինակման նպատակով ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ կատարել ճանաչողական այցելություն:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը Եվրախորհրդի «Կիրքերհանցագործությունների մասին» Բուդապեշտի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու՝ ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերում, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ հիմնախնդրի ուսումնասիրության, անհրաժեշտ առաջարկությունների ներկայացման և օրենսդրական բարեփոխումների փաթեթի նախագծի կազմմանը նպաստելու և օժանդակելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի 24.08.2012թ. հրամանով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԿԱ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների կազմով:

Նշված աշխատանքային խմբի միջամտության՝ առաջարկությունների փաթեթի մշակման և ներկայացման շնորհիվ համապատասխան փոփոխություններ են կատարվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, որը հիմնախնդրին առնչվող մասով արդեն իսկ համապատասխանում է միջազգային չափորոշիչներին:

Հայաստանի Հանրապետությունում 2012թ. գրանցվել է **քննչական քննության հանցագործությունների** 2601 (2011թ.՝ 3096) դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 495-ով կամ 16%-ով:

2012թ. արձանագրվել է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազում: Եթե 2011թ. գրանցվել է 1882 դեպք, ապա 2012թ. նույն ժամանակահատվածում գրանցվել է 1572 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 310-ով կամ 16,5%-ով:

2012թ. ճանապարհատրանսպորտային հանցագործություններն աճել են 7 դեպքով (953-960), 12-ով նվազել են նաև մահվան ելքով դեպքերը (195-183): Նշված 183 դեպքից չի բացահայտվել 9-ը:

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների ընդհանուր թվի զգալի աճ, ըստ էության, չի արձանագրվել, իսկ մահվան ելքով տրանսպորտային հանցագործությունները նվազել են 6%-ով՝ չնայած այն հանգամանքին, որ շարունակվում է ՀՀ տարածք մեծաքանակ արտասահմանյան ավտոմեքենաների ներկրումը և, հետևաբար, դրանց քանակի ավելացումը, ինչպես նաև դեռևս բավարար չէ ճանապարհային երթևեկության նշանների, ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների քանակը:

Ամփոփվել և քննարկման առարկա է դարձել մահվան ելքով տրանսպորտային հանցագործությունների բացահայտման ու քննության որակը, դրանցով իրականացվող պատժողական պրակտիկան, ինչի արդյունքում տրվել են համապատասխան հանձնարարականներ, որոնք նպաստել են այդ ոլորտում կատարված աշխատանքների և դրանց արդյունքների բարելավմանը: Այս գործում մեծ նշանակություն են ունեցել նաև 2012 թվականին ՀՀ մարզերում և Երևան քաղաքում լայնորեն կիրառված արագաչափ սարքերն ու ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման տեխնիկական մյուս միջոցները:

2012թ. գրանցվել է հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության 423 դեպք (2011թ.՝ 448), դեպքերը նվազել են 25-ով կամ 5,6%-ով: Սակայն գրանցված հանցագործության դեպքերի նվազման վերաբերյալ ներկայացված վիճակագրական տվյալներն իրական պատկերը չեն արտացոլում, և ազգաբնակչության մոտ դեռևս շարունակում են մնալ մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք, ուստի այս ուղղությամբ ուստիկանությունը առայժմ անելիքներ ունի:

2012թ. արձանագրվել է խուլիգանության 189 (2011թ.՝ 481) դեպք, դեպքերը նվազել են 292-ով կամ 60,7%-ով, չի բացահայտվել 3-ը (2011թ.՝ 18):

Խուլիգանության դեպքերի նման կտրուկ նվազումը բացատրվում է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից 2012 թվականի մարտի 30-ին Շ.Հախվերդյանի գործով արտահայտած իրավական դիրքորոշմամբ: Նշված ցուցանիշների անկումը պայմանավորված է նաև առանձին դեպքերում իրավակիրառ մարմինների կողմից ՀՀ Վճռաբեկ դատարանի նշված որոշմանը տարբեր մեկնաբանություններ տալով և դրա հետ կապված արդարացման դատավճիռներ չունենալու դատախազների մտահոգությամբ, ուստի նշված երևույթները վերացնելու կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Չանդրադառնալով ՀՀ Վճռաբեկ դատարանի նշված որոշման դրույթներին՝ կապված մեղքի ձևի, արարքի հրապարակայնության, շարժառիթների հետ, նշենք, որ հասարակական կարգի կոպիտ խախտման, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերին նետված բացահայտ մարտահրավերը, շրջապատին և հասարակությանը հակադրվելու ցանկությունը, իր անձի «առավելություններն ընդգծելու մոլուցքը, «ինքնահաստատման պահանջը, եսամոլությունը, սանձարձակությունը, ցինիզմը, այսինքն՝ խուլիգանության այս և նոր առավել հանդուգն ձևերով դրսևորումները, մեր հասարակությանը տեսանելի են ամեն օր՝ թե՛ փողոցներում, թե՛ սրճարաններում, թե՛ գիշերային ակումբներում ու այլ հասարակական և դրանցից դուրս վայրերում, սակայն ինչպես պարզվում է, դասագրքային ճշմարտությունները երբեմն ենթարկվում են կամայական մեկնաբանությունների և, ի վերջո, հանգեցնում արսուրդի: Հակառակ դեպքում ինչով բացատրել այն փաստը, որ 2012թ. ամբողջ տարվա ընթացքում Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքում

գրանցվել է խուլիգանության 1, Աջափնյակ-Դավթաշեն համայնքում՝ 2, Մալաթիա-Սեբաստիա համայնքում՝ 2, Արաբկիր համայնքում՝ 4, Ավան և Նոր Նորք համայնքում՝ 5, Արագածոտնի մարզում 1 դեպք և այլն:

Չավեշտը հասնում է նրան, որ օդանավերում և Ջվարթնոց օդանավակայանում ավելի շատ խուլիգանության դեպքեր են արձանագրվել, քան Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Աջափնյակ-Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա համայնքներում, Արագածոտնի մարզում՝ միասին վերցրած:

374 դեպքով կամ 17,6%-ով նվազել են կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (1754-2128), 18-ով կամ 32,7%-ով՝ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը, ինչը պայմանավորված է նշված հանցատեսակի վերաբերյալ գործերով պատշաճ քննության և մեղավոր անձանց նկատմամբ համաչափ պատիժ կիրառելու հարցերում դրսևորված անհրաժեշտ հետևողականությամբ և, ընդհանրապես, այդ հանցատեսակի դեմ տարվող աշխատանքների բարելավմամբ:

124-ով կամ 13,8%-ով նվազել են ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայություններից, վարժական հավաքներից կամ գորահավաքներից խուսափելու դեպքերը, ինչը վկայում է այս բնույթի հանցագործություններով դատախազության, զինկոմիսարիատի և ոստիկանության աշխատակիցների կողմից համագործակցված լուրջ աշխատանքների իրականացման մասին:

2012թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով իրականացվել է 6354 (2011թ.՝ 6786) նյութի նկատմամբ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, որոնցից 4258 (2011թ.՝ 4077) նյութով մերժվել է քրեական գործի հարուցումը, վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 28 (2011թ.՝ 42) որոշում:

2012թ. հարուցված 3543 (2011թ.՝ 2235) քրեական գործով իրականացվել է դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն: Դրանցից 2879-ով (2011թ.՝ 1412) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում, որոնցից 44-ը (2011թ.՝ 34) վերացվել է: 1658 (2011թ.՝ 1117) քրեական գործ կասեցվել է: Վերացվել է քրեական գործի վարույթը կասեցնելու 30 (2011թ.՝ 34) որոշում:

2012թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերի վերաբերյալ դատարաններ է ուղարկվել 621 (2011թ.՝ 730) քրեական գործ 786 (2011թ.՝ 1042) անձի նկատմամբ, որոնցից 255-ը դատապարտվել է ազատազրկման (2011թ.՝ 396), 24-ը՝ կալանքի (2011թ.՝ 25), 318-ը՝ տուգանքի (2011թ.՝ 390), հիմնական այլ պատիժների՝ 0 (2011թ.՝ 3), պատիժը պայմանականորեն չի կիրառվել 134 (2011թ.՝ 79) անձի նկատմամբ, չէ քր. օր.-ի 64-րդ հոդվածը կիրառվել է 1 (2011թ.՝ 4) անձի նկատմամբ, կարճվել է 19 գործ 21 (2011թ.՝ 110) անձի վերաբերյալ, արդարացվել է 20-ը (2011թ.՝ 8), չէ քր. դատ. օր.-ի 309¹-րդ հոդվածով դատաքննությունը հետաձգվել է 3 (2011թ.՝ 0) գործով, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են կիրառվել 5 (2011թ.՝ 13) անձի նկատմամբ:

Դատարաններում քննված 621 քրեական գործով 786 անձի վերաբերյալ դատական քննության արագացված կարգ կիրառվել է 285 գործով 353 անձի նկատմամբ (2011թ.՝ 339 քրեական գործ, 447 անձ):

2012թ. ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով պատճառված նյութական վնասի չափը կազմել է 118.745.719 (2011թ.՝ 18.956.950) չէ դրամ, պետական գույքին պատճառված վնասի չափը՝ 116.876.259 (2011թ.՝ 13.276.000) չէ դրամ, ֆիզիկական անձանց գույքին պատճառված վնասի չափը՝ 1.869.460 (2011թ.՝ 5.580.950) չէ դրամ: Ավարտված դատաքննությամբ վերականգնվել է հանցագործությամբ պատճառված 5.308.460 (2011թ.՝ 9.876.950) չէ դրամի չափով նյութական վնաս, պետական գույքին պատճառված վնասի չափից վերականգնվել է 5.139.000-ը (2011թ.՝ 5.653.000), ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասի վերականգնման չափից՝ 169.460-ը (2011թ.՝ 4.223.950):

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում 2012թ. գրանցվել է 1139 (2011թ.՝ 1525) հանցագործության դեպք, այսինքն՝ բարձր քողարկվածությամբ օժտված

նշված տեսակի հանցագործությունների դեպքերը նվազել են 386-ով կամ 25,3%-ով, ինչը մտահոգության տեղիք է տալիս: Արձանագրված դեպքերից բացահայտվել է 935-ը (2011թ.՝ 1244), չի բացահայտվել 105-ը (2011թ.՝ 125): Բացահայտումը նախորդ տարվա 90,9%-ի դիմաց կազմել է 89,9%, այսինքն՝ նվազել է 1%-ով:

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, ինչպես նաև թմրամիջոցների մաքսանենգության դեմ պայքարը մշտապես եղել ու մնում է առաջնային խնդիր: Նշված հանցատեսակների դեմ արդյունավետ պայքար ծավալելու համար հատուկ ուշադրություն է դարձվել դրանց վերաբերյալ քննվող քրեական գործերի քննության որակին և օպերատիվ-հետախուզական մարմինների հետ պատշաճ համագործակցությանը: Այս հանցատեսակներն իրենց բնույթով լինելով քողարկված (լատենտային), որպես կանոն, բացահայտվում են քննչական և օպերատիվ-հետախուզական համագործակցված աշխատանքի արդյունքում, ինչը նշանակում է, որ վիճակագրական տվյալների մասին խոսելիս առաջին հերթին պետք է կարևորել հայտնաբերման և բացահայտման ցուցանիշը՝ այն դիտարկելով համեմատական վերլուծության մեջ:

2012թ. թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 686 (2011թ.՝ 711) անձ, որոնցից 26-ը (2011թ.՝ 15) եղել է կին, 5-ը (2011թ.՝ 7)՝ անչափահաս, 18-ը (2011թ.՝ 24)՝ օտարերկրացի, 93-ը (2011թ.՝ 128)՝ նախկինում դատված: ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկա և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ փորձաքննության ներկայացված անձանցից հաշվառման է վերցվել 1009-ը (2011թ.՝ 1130), որոնցից 11-ը (2011թ.՝ 18)՝ կին, 4-ը (2011թ.՝ 0)՝ անչափահաս, 11-ը (2011թ.՝ 27)՝ օտարերկրացի՝ բոլորը (2011թ.՝ 22) Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ:

2012թ. հանրապետությունում գրանցվել է նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող 362 (2011թ.՝ 291) վարչական իրավախախտում:

2012թ. քննվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ 1288 (2011թ.՝ 1653) քրեական գործ, որոնցից բացահայտվել է 1041-ը (2011թ.՝ 1308), չի բացահայտվել 145-ը (2011թ.՝ 187): Բացահայտումը նախորդ տարվա 87,5%-ի համեմատ կազմել է 87,8%:

2011-ից 2012թվական է փոխանցվել 158, իսկ 2012-ից 2013թվական՝ 102 քրեական գործ:

2012թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ քննված 1288 (2011թ.՝ 1653) քրեական գործի նկատմամբ, որոնցից 960-ը (2011թ.՝ 1195) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 145-ը (2011թ.՝ 187) կասեցվել է, 81-ը (2011թ.՝ 113)՝ կարճվել է, 102-ը (2011թ.՝ 158)՝ մնացել անավարտ:

2012թ. դատարաններ ուղարկված 960 (2011թ.՝ 1195) քրեական գործից (գործերի քանակը նվազել է 235-ով կամ 19,6%-ով) դատաքննությունն ավարտվել է 430-ով՝ 553 անձի նկատմամբ: Նշված գործերից 424-ով արձակվել են մեղադրական դատավճիռներ, որոնցով դատապարտվել է 545 անձ, 1 գործով՝ 1 անձի նկատմամբ, ՀՀ քր. դատ. օր.-ի 464-րդ հոդվածի կարգով, կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, 2 գործով 2 անձ արդարացվել է, իսկ 3 քրեական գործի վարույթ՝ 5 անձի նկատմամբ, կարճվել է:

Դատարաններում քննված քրեական գործերով դատապարտված 545 անձից ազատազրկման է դատապարտվել 371-ը, կալանքի՝ 61-ը, տուգանքի՝ 4-ը: ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել 108 անձի նկատմամբ, 4-ի նկատմամբ կիրառվել են լրացուցիչ պատիժներ, իսկ 1-ի նկատմամբ՝ ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածը:

Դատապարտված անձանցից 5-ը եղել է անչափահաս, 26-ը՝ կին, 93-ը՝ նախկինում դատված, 18-ը՝ օտարերկրացի և 1-ը՝ պաշտոնատար անձ:

Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինները որոշակի աշխատանք են կատարել կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության և այդ բնագավառին վերաբերող դատախազական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2012թ. նախապատրաստվել է կոռուպցիոն բնույթի 829 (2011թ.՝ 913) նյութ՝ նախորդ տարվա համեմատ 84-ով պակաս: Դրանցից 309-ով (2011թ.՝ 395) հարուցվել է քրեական գործ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 86-ով:

Նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի թվաքանակի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կոռուպցիոն բնույթի նյութերում բարձր տեսակարար կշիռ են կազմում ՀՀ քր. օր.-ի 205-րդ հոդվածի հատկանիշներով նախապատրաստվող նյութերը:

2011թվականին «Ստուգումների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվել են տարբեր՝ բարձր, միջին ռիսկայնության և ցածր ռիսկայնության տնտեսվարող սուբյեկտների ցանկեր: Բարձր ռիսկայնության ընկերություններում ստուգումները կատարվում են տարին մեկ անգամ, միջին ռիսկայնության ընկերություններում՝ 3 տարին մեկ անգամ, իսկ ցածր ռիսկայնության ընկերություններում՝ 5 տարին մեկ անգամ: Օրենքով սահմանված պահանջների պայմաններում ստուգումների քանակը նվազել է, որի պատճառով էլ հիմնականում նվազել է նախապատրաստվող նյութերի և հարուցված քրեական գործերի թվաքանակը:

Նախապատրաստված 418 (2011թ.՝ 402) նյութով քրեական գործի հարուցումը մերժվել է, որոնցից 307-ը (2011թ.՝ 226)՝ արդարացման, իսկ 111-ը (2011թ.՝ 176)՝ ոչ արդարացման հիմքերով, գերակշռությամբ՝ պատճառված նյութական վնասները հատուցելու հիմքով:

2012թ. ընթացքում ավարտվել է 281 (2011թ.՝ 279) քրեական գործ, 132 (2011թ.՝ 143) քրեական գործի վարույթ կարճվել է՝ 63-ը (2011թ.՝ 56)՝ արդարացման, 69-ը (2011թ.՝ 87)՝ ոչ արդարացման հիմքերով:

Ընթացք տրված քրեական գործերից 39 (2011թ.՝ 28) անձի վերաբերյալ վարույթները կասեցվել են, որոնցից 29-ը (2011թ.՝ 23)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 10-ը (2011թ.՝ 5)՝ այլ հիմքով:

2012թ. անավարտ է մնացել ընդհանուր հաշվով 219 (2011՝ 240) քրեական գործ, որոնցով 14 (2011թ.՝ 25) անձ գտնվել է կալանքի տակ:

2012թ. դատարաններում քննվել է կոռուպցիոն բնույթի ընդամենը 125 քրեական գործ՝ 187 անձի նկատմամբ (2011թ.՝ 129 քրեական գործ՝ 189 անձի նկատմամբ) կամ նախորդ տարվա համեմատ 4 գործով և 2 անձով պակաս, որոնցից 118 քրեական գործով դատապարտվել է 180 անձ (2011թ.՝ 109 քրեական գործով 158 անձ), կամ նախորդ տարվա համեմատ 9 գործով և 22 անձով ավելի:

2012թ. 54 քրեական գործով 81 անձի նկատմամբ (2011թ.՝ 50 գործով 73 անձի նկատմամբ) կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

Դատապարտված 180 անձից 68-ը կամ դատապարտված անձանց 37,7%-ը եղել է պաշտոնատար անձ (2011թ.՝ 158-ից 68-ը կամ 43%-ը):

Դատապարտված անձանցից 84-ը (2011թ.՝ 102) ենթարկվել է ազատազրկման ձևով պատժի, 75-ը (2011թ.՝ 41)՝ տուգանքի, մյուսները՝ այլ պատիժների:

Դատաքննության արդյունքներով 41 (2011թ.՝ 73) անձ պատժից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ, իսկ 3 գործով 3 (2011թ.՝ 7 գործ, 10 անձ) անձի նկատմամբ արձակվել է արդարացման դատավճիռ:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով դատարաններում լաված բոլոր քրեական գործերով պատճառվել է ընդհանուր 2.856.565.000 դրամի նյութական վնաս, (2011թ.՝ 2.784.783.000), որից պետությանը պատճառված վնասը կազմել է 1.815.640.000 դրամ (2011թ.՝ 2.765.166.000): Պետությանը պատճառված նյութական վնասից վերականգնվել է 484.539.000 դրամը կամ 26,6%-ը (2011թ.՝ 157.169.000 կամ 5,6 %):

Ոչ արդարացման հիմքով կարճված քրեական գործերով հանցագործություններով պատճառված նյութական վնասը կազմել է 9.535.031.000 (2011թ.՝ 470.515.000) դրամ, իսկ մերժված նյութերով՝ 2.721.563.000 (2011թ.՝ 3.203.396.000) դրամ, որոնցից վերականգնվել է՝ կարճված գործերով՝ 7.609.974.000 (2011թ.՝ 193.389.000) դրամ, մերժված նյութերով՝ 2.641.127.000 (2011թ.՝ 2.656.067.000) դրամ, այսինքն՝ կարճված քրեական գործերով վերականգնումը կազմում է 80% (2011թ.՝ 41,1%), իսկ մերժված նյութերովը՝ 97% (2011թ.՝ 83%):

Համագործակցելով իրավասու պետական մարմինների և կազմակերպությունների հետ՝ շարունակաբար իրականացվել են ՀՀ Կառավարության 08.10.2009թ. N 1272-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների ծրագրի միջոցառումների» ցանկում նշված՝ 2009-2011թթ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա համապատասխան միջոցառումները:

Պետական շահերի պաշտպանության բնագավառում 2012թ. ՀՀ դատախազության կողմից կատարվել է 434 ստուգում (2011թ.՝ 417), հայտնաբերվել է 586 (2011թ.՝ 487) իրավախախտում, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախագուշացվել է 250 (2011թ.՝ 437) անձ, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով նախապատրաստվել է 245 (2011թ.՝ 246) նյութ, որոնցով հարուցվել է 201 (2011թ.՝ 171) հայց և 61 (2011թ.՝ 81) քրեական գործ, կամովին պետություն է վերականգնվել 483.243.292 (2011թ.՝ 815.894.853) դրամ:

2012թ. պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով իրականացված ուսումնասիրությունների (ստուգումների) արդյունքներով, ինչպես նաև պետական շահերի խախտման վերաբերյալ ստացված հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով, հարուցվել է 91 (2011թ.՝ 111) քրեական գործ, որոնցից ավարտվել է 60 (2011թ.՝ 53) գործի քննություն՝ դատարան է ուղարկվել 43 (2011թ.՝ 32), կարճվել է 17 (2011թ.՝ 21) քրեական գործ, մինչդասական վարույթի ընթացքում վերականգնվել է 134.500.000 (2011թ.՝ 108.959.029) դրամ, իսկ դատաքննության ընթացքում՝ 16.600.000 (2011թ.՝ 4.896.249) դրամ:

2012թ. դատարան է հարուցվել 329 (2011թ.՝ 267) հայց՝ 4.483.705.132 (2011թ.՝ 2.213.038.000) դրամի բռնագանձման պահանջով: Դատարաններում քննվել է 236 (2011թ.՝ 211) հայց, որոնցից բավարարվել է 2.091.806.000 (2011թ.՝ 984.226.000) դրամի հայցապահանջով 165 (2011թ.՝ 157) հայց, մերժվել է 45-ը (2011թ.՝ 17), կարճվել է 26 գործի վարույթ: Դատաքննության ընթացքում փաստացի վերականգնվել է 63.890.000 (2011թ.՝ 207.748.000) դրամ:

2012թ. պետական մարմիններից ստացվել է ստորադաս դատարանների դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ 35 (2011թ.՝ 35) միջնորդություն, որոնց քննարկման, ինչպես նաև առանց միջնորդությունների դատական ակտեր բողոքարկելու նպատակով, դատարաններից պահանջվել և ուսումնասիրվել են քաղաքացիական ու վարչական գործերը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բերել է 58 (2011թ.՝ 47) վճռաբեկ բողոք, որոնցից բավարարվել է 1-ը (2011թ.՝ 2) վերադարձվել՝ 44-ը, իսկ 13 վճռաբեկ բողոք դեռևս չի քննարկվել:

ՀՀ դատախազությունը բերել է 35 (2011թ.՝ 30) վերաքննիչ բողոք, որոնցից բավարարվել է 6-ը (2011թ.՝ 11), 13 (2011թ.՝ 9) բողոք մերժվել է, 15-ը (2011թ.՝ 10) դեռևս չի քննարկվել, իսկ 1 բողոք հետ է վերցվել:

Պետական շահերի պաշտպանության բնագավառում մտահոգիչ է դատարանների կողմից հանցագործությամբ պետությանը վնաս պատճառած անձանց մեղավորությունը հիմնավորող՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի բացակայության պատճառաբանությամբ հայցերը մերժելու դատական պրակտիկան, ինչին նպաստում է նաև նշված հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից տևական ժամանակ իրավական լուծում չտալու հանգամանքը:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման բնագավառում` 2012թ. ՀՀ ԱՆ

քրեակատարողական հիմնարկներում և հոգեբուժական հաստատություններում կատարվել է 103 հանցագործություն 118 անձի (2011թ.` 156 հանցագործություն, 192 անձ) կողմից, այդ թվում` թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության 65 (2011թ.` 124) դեպք, որոնցից 47-ը (2011թ.` 74) թմրամիջոցների իրացման, 18-ը (2011թ.` 50)` առանց իրացնելու նպատակի, 3-ը (2011թ.` 6)` ինքնասպանության հասցնելու և 10-ը (2011թ.` 8)` ինքնասպանության փորձի, 5-ը (2011թ.` 4)` պատիժն ի կատար ածող հիմնարկի գործունեությանը խոչընդոտելու, 4-ը (2011թ.` 1)` ՔԿՀ-ից փախուստի, 1-ը (2011թ.` 0)` առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը (2011թ.` 4)` առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 2-ը (2011թ.` 3)` առողջությանը թեթև վնաս պատճառելու, 4-ը (2011թ.` 3)` ծեծի, 2-ը (2011թ.` 1)` խարդախության, 1-ը (2011թ.` 0)` շորթման, 3-ը (2011թ.` 0)` կեղծ փաստաթուղթ պատրաստելու և օգտագործելու, 1-ը (2011թ.` 0)` պաշտոնեական դիրքի չարաշահման, 1-ը (2011թ.` 0)` թրաֆիքինգի, 1-ը (2011թ.` 0)` սուտ մատնության:

2012թ. ընթացքում նախորդ տարվա համեմատ էապես նվազել է արձանագրված հանցագործությունների թիվը, այսինքն` դեպքերը նվազել են 53-ով կամ 33,9%-ով: Ընդ որում, այդպիսի պատկերը գերազանցապես ՔԿՀ-ներում արձանագրված հանցագործությունների դեպքերի կտրուկ նվազեցման արդյունք է, որտեղ դրանք նվազել են 54-ով կամ 35,2%-ով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՔԿՀ-ներում հանցագործությունների կատարմանը նպաստում է նաև ՔՀԿ-ների վարչակազմի կողմից նախականիչ միջոցառումները ձևականորեն կամ մակերեսորեն կատարելու հանգամանքը: Մասնավորապես, բազմաթիվ են այն դեպքերը, երբ թմրամիջոցների և այլ արգելված իրերի տարածք ներթափանցելուն նպաստում է ընդունված հանձնույթները մանրակրկիտ չզննելը: Շատ դեպքերում դատապարտյալների խցերի պլանային և ոչ պլանային խուզարկությունները ձևական բնույթ են կրում:

ՔՀԿ-ներում գրանցված թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը վերաբերող դեպքերն իրենց գերակշիռ մասով առնչվել են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով պատիժ կրող դատապարտյալներին: Դրան հատկապես նպաստում է ՔՀԿ-ների ներքին կանոնակարգով արգելված բջջային հեռախոսների առկայությունը պատիժ կրող դատապարտյալների մոտ: Գտնվելով պատժի կրման վայրում, նրանք բջջային հեռախոսների միջոցով կազմակերպում և ուղղորդում են թմրամիջոցների ապօրինի մուտքը քրեակատարողական հիմնարկներ, իսկ թմրամիջոցների հայտնաբերվելուց հետո, նույն եղանակով խոչընդոտում են քննությանը: ՔՀԿ-ներ թմրամիջոցների ներթափանցմանը նպաստում է նաև հանձնույթների ընդունման, ինչպես նաև տեսակցությունների կազմակերպման` օրենքով և ներքին կանոնակարգով սահմանված ընթացակարգերի անկատարությունը, դրանց կազմակերպման ընթացքում ՔՀԿ-ների աշխատանքներում տեղ գտած թերություններն ու բացթողումները: Առանձին դեպքերում ներթափանցումը հնարավոր է դառնում ՔՀԿ-ների աշխատակիցների` իրենց ծառայողական պարտականությունների հանդեպ անփույթ և անպատասխանատու վերաբերմունքի հետևանքով, իսկ որոշ դեպքերում կատարվում է հենց վերջիններիս նախաձեռնությամբ կամ միջոցով:

Արտաքին աշխարհից մեկուսացված դատապարտյալների կողմից պատիժը կրելու ընթացքում նոր հանցագործություններ կատարելը պայմանավորված է նաև ՔՀԿ-ներում գործող օպերատիվ ծառայությունների, հանցագործությունների նախականիսման ուղղությամբ իրականացրած աշխատանքների ցածր արդյունավետությամբ, քննչական մարմինների և այլ օպերատիվ ծառայությունների հետ նրանց համագործակցության անբավարար մակարդակով:

Դատապարտյալների կողմից պատժի կրման ընթացքում դիտավորյալ նոր հանցագործություններ կատարելուն նպաստում են նաև սոցիալական, հոգեբանական և

իրավական աշխատանքների իրականացման ընթացքում ԶՀԿ-ներում տեղ գտած թերություններն ու բացթողումները, այդ աշխատանքների ոչ արդյունավետ կազմակերպումը, որի հետևանքով ուղղիչ հիմնարկները լիարժեք չեն նպաստում ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակների իրականացմանը, մասնավորապես, պատժի ենթարկված անձանց ուղղմանը: Այդ կապակցությամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով համապատասխան հաղորդումներ են ուղարկվել քրեակատարողական ծառայության ղեկավարությանը:

2012թ. ընթացքում ՀՀ ԱՆ ԶԿ համակարգում ձևավորված հանցավորության արդյունքների վերլուծությունը և դրանց համադրումը նախորդ տարիների աշխատանքներին ցույց տվեցին, որ համակարգում հանցագործությունների դեպքերի տարեցտարի արձանագրվող նվազումը ամենևին պայմանավորված չէ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացմամբ: Միանշանակ է, որ այդ հանգամանքը, հատկապես թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի նվազման համատեքստում, չի կարելի դիտարկել որպես իրականությանը համապատասխանող պատկեր, այլ, ընդհակառակը, վկայում է այդ բնույթի լատենտային հանցագործությունների բացահայտման ոլորտում տարվող աշխատանքների անարդյունավետության մասին:

Ինչ վերաբերում է հոգեբուժական հաստատություններին, ապա այստեղ դեպքերն աճել են 1-ով (3-4):

2012թ. ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում մահացել է 28 դատապարտյալ (2011թ.՝ 32), որոնցից 3-ը ինքնասպանություն գործելու (2011թ.՝ 6) եղանակով: Նշված 3 դեպքով հարուցվել են քրեական գործեր և կատարվել է նախաքննություն, 25 դատապարտյալի մահվան փաստերով նախապատրաստվել են նյութեր, որոնցից 19-ով պարզվել են մահվան պատճառները և որոշումներ են կայացվել հանցադեպի կամ հանցակազմի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Անավարտ է մնացել այդ բնույթի 6 նյութի ընթացքը:

2012թ. անչափահասների կողմից կամ անչափահասների դաստիարակչական հսկողություն իրականացնող հաստատություններում հանցագործությունների դեպքեր չեն արձանագրվել (2011թ.՝ 0):

2012թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 326 (2011թ.՝ 283) նյութի նախապատրաստման նկատմամբ, որոնցից 17-ը (2011թ.՝ 51) վերաբերել է նախաքննությանը, իսկ 172-ը (2011թ.՝ 232)՝ հետաքննությանը: 326 նյութից 89-ով հարուցվել են քրեական գործեր: Հարուցված 89 քրեական գործից 17-ը եղել է մարդու դեմ ուղղված, 1-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված, 10-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների, իսկ 61-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով նախապատրաստված նյութերով:

Նախապատրաստված 189 (2011թ.՝ 144) նյութով մերժվել է քրեական գործի հարուցումը: Մերժված նյութերից 161-ը եղել են մարդու դեմ ուղղված, 15-ը՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված, 15-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործությունների և 9-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության փաստերով նախապատրաստված նյութեր, մերժված 189 նյութից 187-ը մերժվել է արդարացման և միայն 2-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2012թ. ընթացքում անավարտ է մնացել 42 նյութ, որոնք փոխանցվել են 2013թ.:

2012թ. ընթացք է տրվել 134 (2011թ.՝ 205) քրեական գործի, որոնցից 45-ը (2011թ.՝ 56) փոխանցվել է 2011 թվականից, իսկ 89-ը (2011թ.՝ 149) հարուցվել և վարույթ է ընդունվել 2012թ. ընթացքում:

2012թ. քննված 134 քրեական գործից ավարտվել է 59-ը (2011թ.՝ 91), որոնցից 17-ը (2011թ.՝ 15) կարճվել է, իսկ 42-ը 58 անձի (2011թ.՝ 76-ը՝ 98 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարաններ: Կասեցվել է 51 (2011թ.՝ 69) քրեական գործի վարույթ:

2012թ. վարույթում քննված 4 (2011թ.՝ 3) քրեական գործ ըստ ենթակայության ուղարկվել է այլ մարմիններ՝ հետագա ընթացքը լուծելու համար: Անավարտ է մնացել 20 (2011թ.՝ 27) գործ:

2011թ. մեղադրական եզրակացությամբ դատարաններ է ուղարկվել 64 (2010թ.՝ 84) քրեական գործ՝ 90 (2010թ.՝ 114) անձի նկատմամբ, որոնք բոլորն էլ դատարանների կողմից ընդունվել են վարույթ:

Դատարաններում քննված 44 (2011թ.՝ 66) գործից 2-ով 2 (2011թ.՝ 61) անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ:

2012թ. դատարանների կողմից բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումներ են կայացվել անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 20 (2011թ.՝ 44) անձի նկատմամբ: Դատարանների որոշումներով 2 (2011թ.՝ 3) անձի նկատմամբ նշանակվել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում, 11 (2011թ.՝ 27) անձի նկատմամբ՝ հարկադիր բուժում ընդհանուր տիպի հոգեբուժական հիվանդանոցում, իսկ 7 (2011թ.՝ 14) անձի նկատմամբ՝ հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:

2012թ. քննված 44 գործից 1-ով (ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 1-ին մաս) հանցագործությամբ ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասը կազմել է 15000 ՀՀ դրամ, որը վերականգնվել է նախաքննության փուլում:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 26.05.2011թ. ԱԺՈ-277-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, 2011թ. մայիսի 26-ից մինչև 2013թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ ԱՆ ՔԿՎ քրեակատարողական հիմնարկներից պատժի հետագա կրումից ազատվել է 606 դատապարտյալ: Նույն ժամանակահատվածում 541 դատապարտյալի նկատմամբ պատժի չկրած մասը կրճատվել է:

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատիժների կատարման ծառայության տարածքային ստորաբաժանումներում հաշվառված դատապարտյալներից համաներման որոշման հիման վրա 01.01.2013թ.-ի դրությամբ ազատվել է 1313 դատապարտյալ, պատժի չկրած մասը կրճատվել է 130 դատապարտյալի նկատմամբ:

01.01.2013թ.-ի դրությամբ կալանավորված և ազատագրկման վայրերում պատիժ կրող դատապարտյալների թիվը կազմել է 4756 կամ 224-ով ավելի, քան 01.01.2012թ.-ի դրությամբ:

2012թ. ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1709 անձ, որոնցից 989-ը՝ պատիժը լրիվ կրելու, 280-ը՝ պայմանական վաղաժամկետ կարգով, 18-ը՝ ներմամբ, 190-ը՝ խափանման միջոց կալանքը փոխելու, 224-ը՝ դատարանի դահլիճից, 3-ը՝ հիվանդության պատճառով, 5-ը՝ համաներմամբ:

Տարբեր հիվանդություններից մահացել է 28 (2011թ.՝ 32) դատապարտյալ:

Դատախազական աշխատանքի ամփոփ տվյալներ.

2012 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 27735 (2011թ.՝ 26138) նյութի նախապատրաստման, 11233 (2011թ.՝ 12928) քրեական գործի հետաքննության և նախաքննության նկատմամբ: Դատախազների կողմից վերացվել է հետաքննության և նախաքննության մարմինների կողմից կայացված 385 (2011թ.՝ 397) որոշում: Քրեական գործերով և նյութերով հետաքննության և նախաքննության մարմիններին տրվել է 2286 (2011թ.՝ 2322) գրավոր ցուցում: Մինչդատական վարույթում դատախազների կողմից դատարան է ներկայացվել, ինչպես նաև դատախազների մասնակցությամբ քննվել է 127 (2011թ.՝ 40) միջնորդություն (որպես խափանման միջոց կիրառվել են կալանքը, խուզարկության և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ): Դատարանում մեղադրանքը պաշտպանվել է 2337 (2011թ.՝ 2684) քրեական գործով: Դատախազների կողմից քրեական գործերով դատական ակտերի՝ դատավճիռների, վճիռների և որոշումների դեմ բերվել է 154 (2011թ.՝ 242) վերաքննիչ և 53 (2011թ.՝ 135) վճռաբեկ բողոք:

Ընդ որում, 154 (2011թ.՝ 242) վերաքննիչ բողոքից բավարարվել է 24-ը (2011թ.՝ 43), իսկ 53 (2011թ.՝ 135) վճռաբեկ բողոքից՝ 5-ը (2011թ.՝ 9): ՀՀ դատախազության կողմից հարուցվել է 329 (2011թ.՝ 268) հայց, որոնցից պետական շահերի պաշտպանության մասով դատարանի կողմից քննության է առնվել 236-ը (2011թ.՝ 211), բավարարվել է 165-ը (2011թ.՝ 157): Կատարվել է 513 (2011թ.՝ 2227) ստուգում, ուսումնասիրություն, ամփոփում: Ներկայացվել է 745 (2011թ.՝ 916) նախագրուշացում, հաղորդում և միջնորդագիր: Ընթացք է տրվել 11333 (2011թ.՝ 11016) դիմումի, բողոքի, առաջարկության:

ՀՀ զինվորական դատախազության կողմից 2012թ. ՀՀ ՁՈւ-ի և այլ գորքերի գործամասերում արձանագրվել է 4341 (2011թ.՝ 4530) դեպք: Արձանագրվել է նվազում 189 դեպքով կամ 4,2%-ով: Արձանագրված դեպքերից 3119-ը (2011թ.՝ 2997) կամ 71,8%-ը (2011թ.՝ 6,1%-ը) եղել են պատահարներ, 1193-ը (2011թ.՝ 1503) կամ 27,5%-ը (2011թ.՝ 33,2%)՝ հանցագործություններ, այդ թվում՝ 859-ը (2011թ.՝ 1090) կամ 72%-ը (2011թ.՝ 72,5%)՝ զինվորական, 334-ը (2011թ.՝ 413) կամ 28%-ը (2011թ.՝ 27,5%)՝ այլ ընդհանուր, 29 (2011թ.՝ 30) դեպքի կամ 0,7%-ի (2011թ.՝ 0,7%) հանգամանքները դեռևս չեն պարզվել:

Նախորդ տարվա համեմատ պատահարներն աճել են 122 դեպքով կամ 4,1%-ով, հանցագործությունները՝ 310-ով կամ 20,6%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 231-ով կամ 21,2%-ով, իսկ այլ հանցագործությունները՝ 79-ով կամ 19,1%-ով:

2012թ. արձանագրված 1193 (2011թ.՝ 1503) հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 111-ը (2011թ.՝ 119) կամ 9,3%-ը (2011թ.՝ 7,9%), որոնցից 74-ը (2011թ.՝ 71)՝ ծանր, 37-ը (2011թ.՝ 48)՝ առանձնապես ծանր, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործություններն աճել են 3-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 11-ով:

2012թ. արձանագրվել է ծառայության հետ կապված մահվան 29 (2011թ.՝ 36) դեպք, որի հետևանքով մահացել է 36 (2011թ.՝ 36) զինծառայող, որոնցից հակառակորդի կողմից սպանության՝ 13 (2011թ.՝ 10), սպանության՝ 2 (2011թ.՝ 2), ակահի պայթյունից՝ 1 (2011թ.՝ 1), ՁՕԿ-ի խախտման հետևանքով՝ 1 (2011թ.՝ 2), ինքնասպանության՝ 6 (2011թ.՝ 5), ինքնասպանության հասցնելու՝ 3 (2011թ.՝ 4), հիվանդություններից՝ 3 (2011թ.՝ 3) և ավտովթարից՝ 7 (2011թ.՝ 6):

2012թ. ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 1439 (2011թ.՝ 1508) զինծառայող, այսինքն՝ նվազում է արձանագրվել 69-ով կամ 4,6%-ով:

2012թ. ընթացքում արձանագրված 1193 հանցագործությունից 29-ով կամ 2,4%-ով հնարավոր չի եղել պարզել քրեական պատասխանատվության ենթակա անձի (անձանց) ով լինելը, բացահայտումը կազմել է 97,6% (2011թ.՝ 97,9%):

2012թ. նախապատրաստվել է 4682 նյութ (2011թ.՝ 5900), որոնցից 1585-ը (2011թ.՝ 1771)՝ քննչական, 3097-ը (2011թ.՝ 4129)՝ ՌՌ ստորաբաժանումների և գործամասերի կողմից: Քննչական ստորաբաժանումների կողմից նախապատրաստված 1585 (2011թ.՝ 1158) նյութից 1093-ով հարուցվել է քրեական գործ, 435-ը (2011թ.՝ 359) մերժվել է, 6 (2011թ.՝ 40) նյութ ուղարկվել է ըստ ենթակայության, 49 (2011թ.՝ 186) նյութ միացվել է այլ նյութերի և քրեական գործերի, իսկ 2 (2011թ.՝ 28) նյութ փոխանցվել է 2013թ.: Մերժված 435 (2011թ.՝ 359) նյութի օրինականությունը ստուգվել, վերստուգվել և հաստատվել է, իսկ 1 (2011թ.՝ 17) նյութով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացվել է:

2012թ. ՀՀ ՊՆ ՌՌՎ մարմինների և գործամասերի կողմից նախապատրաստված և ընթացք տրված 3097 (2011թ.՝ 4129) նյութից 2615-ով (2011թ.՝ 2592) մերժվել է քրեական գործի հարուցումը, 465-ը (2011թ.՝ 1423) ուղարկվել է ըստ ենթակայության, 17 (2011թ.՝ 40) նյութ փոխանցվել է 2013թ., բացի այդ, 2011թ. նախապատրաստված 24 նյութ միացվել է այլ նյութերի:

2012թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել ՀՀ ՊՆ ՔԾ բաժինների վարույթում քննվող 2032 (2011թ.՝ 2070) քրեական գործի նկատմամբ, այդ թվում՝ 15-ը (2011թ.՝ 26)՝ կրկնակի: Դրանցից 351-ը (2011թ.՝ 147) փոխանցվել է նախորդ տարվանից, 1368-ը (2011թ.՝ 1609) հարուցվել է հաշվետու տարում,

որոնցից 1091-ը (2011թ.՝ 1158)՝ քննչական մարմնի, 277-ը (2011թ.՝ 451)՝ կայագործերի զինվորական դատախազների կողմից, 153-ը (2011թ.՝ 127) ստացվել է այլ մարմիններից, 33-ը (2011թ.՝ 31) անջատվել է այլ քրեական գործերից, 116-ով (2011թ.՝ 130) վերսկսվել է նախաքննությունը, 11-ը (2011թ.՝ 26) դատախազի կողմից վերադարձվել է լրացուցիչ նախաքննության:

2012թ. ավարտված քրեական գործերից 857-ը՝ 1213 անձի (2011թ.՝ 936 գործ, 1260 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 քրեական գործ 1 անձի նկատմամբ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ: 489 (2011թ.՝ 435) քրեական գործով վարույթը կարճվել է:

2012թ. 131 (2011թ.՝ 152) քրեական գործով վարույթը կասեցվել է: 131 (2011թ.՝ 109) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 75-ը (2011թ.՝ 63) միացվել է այլ գործի, 330-ը (2011թ.՝ 351) փոխանցվել 2013թ.:

2012թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են հանցագործություններով պետությանը 127.717.038 (2011թ.՝ 63.101.871) դրամի վնաս պատճառելու փաստերը, որից մինչդատական վարույթում վերականգնվել է 99.577.039 (2011թ.՝ 45.964.432) դրամը:

2012թ. զինժառանգության կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության կողմից մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 857 քրեական գործ՝ 1213 անձի (2011թ.՝ 936 գործ, 1260 անձ) վերաբերյալ, իսկ 1 քրեական գործ 1 անձի (5 գործ, 5 անձ) նկատմամբ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ: Դատարան ուղարկված բոլոր գործերն էլ ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ 810 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 1075 անձ (2011թ.՝ 752 գործ, 975 անձ):

Դատարանների որոշումներով 22 քրեական գործ 36 անձի (2011թ.՝ 113 գործ, 160 անձ) վերաբերյալ կարճվել է: 13 (2011թ.՝ 160) անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ: 5 գործով 8 անձի վերաբերյալ կայացվել է արդարացման դատավճիռ (2011թ.՝ 1 գործ, 1 անձ):

Դատապարտված 1075 (2011թ.՝ 975) անձից 243-ը (2011թ.՝ 313) դատապարտվել է ազատազրկման, 312-ը (2011թ.՝ 287)՝ կալանքի, 163-ը (2011թ.՝ 195)՝ կարգապահական գումարտակում պահելու, 51-ը (2011թ.՝ 32)՝ տուգանքի, պատիժը պայմանականորեն չի կիրառվել ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածի կիրառմամբ 306 (2011թ.՝ 147) անձի նկատմամբ: Դատապարտվածներից 2-ի (2011թ.՝ 1) նկատմամբ նշանակվել է նաև լրացուցիչ պատիժ: 1 գործով 1 անձի (2011թ.՝ 1 գործ, 1 անձ) նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Դատավճռի կայացմամբ ավարտված 1075 անձի վերաբերյալ 810 քրեական գործից 574-ով կամ 70,9%-ով 760 անձի նկատմամբ կիրառվել է դատաքննության արագացված կարգ (2011թ.՝ 608 գործով 760 անձ):

Դատարանների որոշումներով 22 քրեական գործ 35 անձի (2011թ.՝ 7 գործ, 16 անձ) վերաբերյալ կարճվել է: 1 գործով 1 անձի վերաբերյալ դատարանի կողմից կայացվել է կասեցման որոշում ՀՀ քր. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

2012թ. իրականացվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով 577 (2011թ.՝ 591) ուսումնասիրություն: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է պետության գույքային շահերի 450 (2011թ.՝ 402) խախտում, պետությանը պատճառվել է 1.538.903.674 (2011թ.՝ 953.506.700) դրամի վնաս: Փաստացի վերականգնվել է պետությանը պատճառված 1.050.723.001 (2011թ.՝ 933.895.400) դրամի վնասը:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստվել և քննչական մարմիններին է փոխանցվել 107 (2011թ.՝ 81) նյութ, դատարան է հարուցվել

պետական շահերի պաշտպանության 3 (2011թ.՝ 25) հայց՝ ընդհանուր առմամբ 1.694.588 (2011թ.՝ 11.148.200) դրամ բռնագանձելու պահանջով:

Նախապատրաստված նյութերով քննչական մարմինների կողմից հարուցվել է 52 (2011թ.՝ 45) քրեական գործ:

Նախապատրաստված նյութերով և հարուցված քրեական գործերով արձանագրվել է պետությանը պատճառված 1.422.262.517 (2011թ.՝ 217.606.157) դրամի վնաս, որից 58.314.210 (2011թ.՝ 11.646.100) դրամը մինչդատական վարույթի ընթացքում վերականգնվել է:

2012թ. պետական շահերի պաշտպանության 3 (2011թ.՝ 25) հայց է հարուցվել դատարան՝ ընդհանուր առմամբ 1.694.588 (2011թ.՝ 11.148.200) դրամ բռնագանձելու պահանջով:

2012թ. դատարանների կողմից քննության է առնվել 1 (2011թ.՝ 26) հայց՝ 570.367 (2011թ.՝ 60.936.600) դրամ բռնագանձելու պահանջով, որն ամբողջությամբ բավարարվել է, 2 հայց դատաքննության ընթացքում է:

Վերլուծությունը ցույց է տվել, որ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների պատճառներ են հանդիսացել զինծառայողների մոտ տարբեր բնույթի ընտանեկան, անձնական, կենցաղային խնդիրների առկայությունը, ծառայության պայմաններին չհարմարվելն ու անտարբեր վերաբերմունքը ծառայության նկատմամբ: Հատկապես սպաների շրջանում այս երևույթի դրսևորումները պայմանավորված են առանձին գործասերում կենցաղի, հանգստի կազմակերպման անհրաժեշտ պայմանների բացակայությամբ, քաղաքացիական կյանքում ունեցած տարաբնույթ խնդիրներով, հիվանդ կամ այլ կարգի օժանդակության կարիք ունեցող ընտանիքի անդամների խնդիրները հոգալու ցանկությամբ, կրտսեր և ավագ հրամանատարական կազմի սպաների կողմից ենթակա զինծառայողների տարաբնույթ խնդիրների լուծման հարցում անհոգի և անտարբեր վերաբերմունքով, զինծառայողների նկատմամբ համաժառայակիցների, կրտսեր ու ավագ սպայական կազմի ներկայացուցիչների ոչ կանոնադրային վարքագծի դրսևորումներով, որոնք հաճախ հանգեցնում են, որպես բողոքի նշան, գորամասը կամ ծառայության վայրը լքելուն և այլն:

Չինվորական հանցագործությունների շարքում, ըստ տարածվածության, հաջորդը զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնազրբային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններն են, որոնց պատճառներն են զինծառայողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքներում առկա ձևախեղումներն ու բաղթողումները, զինվորական կանոնազրբերի պահանջների վատ իմացությունը, ծառայությունը դրանց համապատասխան կազմակերպելու մշակույթի բացակայությունը, հատկապես զորակոչին հաջորդած ժամանակաշրջանում զորակոչիկների միջանձնային հարաբերություններում վտանգավոր ու անխուսափելի դրսևորումների կանխարգելմանն ուղղված անբավարար աշխատանքը, գործասերում առանձին հեղինակությունների առկայությունը և կրտսեր հրամանատարական կազմի կողմից նրանց հակակշռելու և սեփական հեղինակությամբ նրանց ազդեցությունը չեզոքացնելու անկարողությունը, համաժառայակիցների և կրտսեր ու ավագ սպայական կազմի փոխհարաբերություններում զինծառայողների կողմից սադրիչ վարքագծի տարաբնույթ դրսևորումները, առանձին զինծառայողների ինքնահաստատվելու, սեփական անձի ենթադրյալ առավելություններն ընդգծելու ցանկությունն ու դրանով պայմանավորված՝ շրջապատի անխուսափելի հակազդեցությունը և այլն:

Կազմակերպական-վերահսկողական գործունեության ընթացքում 2011թ. ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ընդունվել է 57 (2011թ.՝ 61) ներքին հրաման, կազմվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների 3 (2011թ.՝ 3) կարգադրություն և 5 (2011թ.՝ 12) հանձնարարական:

Հրավիրվել է ՀՀ դատախազության կոլեգիայի 6 (2011թ.՝ 8) նիստ, որոնց առնչությամբ կատարվել են համապատասխան կազմակերպական աշխատանքներ:

ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները, որպես դատախազության կողմից մշակվող և իրականացվող քրեական պետական քաղաքականության առանձնահատուկ իրավակազմակերպական դրսևորումներ, ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամաններով շարունակվել են կենսագործվել տարածքային դատախազություններում և կառուցվածքային ստորաբաժանումներում, իսկ դրանց միջոցով նաև նախաքննության և հետաքննության մարմիններում: ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները վերաբերել են այնպիսի հիմնարար հարցերի, ինչպիսիք են՝ 2011թ. և 2012թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կողմից պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու և փոփոխելու, ինչպես նաև տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար փակ տեսակի ուղղիչ հիմնարկ ուղարկելու կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնելու գործընթացի օրինականության վիճակը, 2011թ. աշնանային և 2012թ. գարնանային գորակոչի արդյունքները, ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ ՉՌԻ-ում 2011թ. ընթացքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստերով հարուցված քրեական գործերի նախնական քննության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության վիճակը և դատարանում մեղադրանքի պաշտպանության պրակտիկան, 2010-2011թթ. ընթացքում գողության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակը և մեղադրանքի պաշտպանության պրակտիկան, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2009-2011թթ. ընթացքում ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ գործող օրենսդրության պահանջների կատարման վիճակը, 2011թ. և 2012թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կողմից պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու և փոփոխելու, ինչպես նաև տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար փակ տեսակի ուղղիչ հիմնարկ ուղարկելու կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնելու գործընթացի օրինականությունը, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26.05.2011թ. N ԱԺՈ-277-Ն որոշման կիրառման ընթացքում ծագած խնդրահարույց որոշումների (դատական ակտերի) կապակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքները, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ՀՀ գլխավոր դատախազությունում 29.10.2012թ.-ին անցկացված խորհրդակցության արդյունքներով ներկայացված պահանջների, հանձնարարականների ներքո նախաքննության, դատախազական հսկողության իրականացման ընթացքում թույլ տրված թերացումների, խախտումների, դրանց օբյեկտիվ և սուբյեկտիվ դրսևորումների, ծագած հիմնախնդիրների քննարկման ու դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները և այլն:

Վերլուծվել և ամփոփվել են դատախազությունների ու կառուցվածքային ստորաբաժանումների 2011թ. տարեկան և 2012թ. 1-ին կիսամյակի աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններն ու օպերատիվ խորհրդակցությունները, վերահսկվել է նախատեսված պահանջների իրականացումը, ինչպես նաև համապատասխան ընթացք է տրվել նշված հիմնախնդիրներին և դրանց լուծմանն ուղղված կառուցակարգերին: Լրամշակվել են ներքին իրավական ակտերը, ընթացք է տրվել օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու նախաձեռնություններին, իրականացվել են իրավակազմակերպական և կառուցվածքային փոփոխություններ:

Դատախազների կողմից ծառայողական պարտականությունների կատարման և վարքագծի կանոնների պահպանման, ինչպես նաև օրենքի պահանջների կատարման վիճակը պարզելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հանձնարարությամբ և նախաձեռնությամբ իրականացվել է՝

22 կարգապահական վարույթ՝ 25 դատախազի և 1 պետծառայողի նկատմամբ, որը կազմում է հաշվետու ժամանակաշրջանում միջինը 333 հաստիք զբաղեցրած դատախազների 7,5 %-ը:

Ավարտված կարգապահական վարույթների արդյունքներով 7 դեպքով՝ 7 դատախազի և 1 պետծառայողի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ, 7 դեպքով՝ 9 դատախազի նկատմամբ նշանակվել է «դիտողություն» տեսակի կարգապահական տույժ, 2 դեպքով՝ 2 դատախազի նկատմամբ կարգապահական վարույթի նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով, որի եզրակացության համաձայն նրանց նկատմամբ նշանակվել է «զբաղեցրած պաշտոնից ազատում» տեսակի կարգապահական տույժ, 3 դեպքով՝ 4 դատախազի նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել, ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ դատախազներն ազատվել են կարգապահական տույժից, դատախազների նկատմամբ իրականացված կարգապահական վարույթի արդյունքները ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ քննարկվել են ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացված օպերատիվ խորհրդակցություններում և ՀՀ դատախազության կոլեգիաներում, որոնց ընթացքում ընդունված որոշումներով դատախազները խիստ նախազուշացվել են և միաժամանակ նրանց ուշադրությունը հրավիրվել է արձանագրված թերությունների, բացթողումների ու խախտումների վրա՝ անհրաժեշտ հետևություններ անելու և այսուհետ դրանք բացառելու համար:

2 դեպքով՝ 2 դատախազի նկատմամբ իրականացված կարգապահական վարույթը դադարեցվել է՝ կարգապահական վարույթի ընթացքում իր դիմումի համաձայն զբաղեցրած պաշտոնից դատախազի ազատվելու պատճառով:

1 դեպքով՝ 1 դատախազի նկատմամբ իրականացված կարգապահական վարույթը ՀՀ գլխավոր դատախազի որոշմամբ դադարեցվել է, և դատախազն ազատվել է կարգապահական պատասխանատվությունից, իսկ կարգապահական վարույթի նյութերը քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացվող օպերատիվ խորհրդակցությունում, որի արդյունքում դատախազը խիստ նախազուշացվել է և նրա ուշադրությունը հրավիրվել է մի շարք թերացումների վրա՝ անհրաժեշտ հետևություններ անելու և այսուհետ դրանք բացառելու համար:

2012թ. ընթացքում քաղաքացիների դիմում-բողոքների և առանձին ստուգումների արդյունքներով 64 դատախազի և 3 պետծառայողի նկատմամբ իրականացվել է 54 ուսումնասիրություն, որոնցից՝ 50 ուսումնասիրություն 59 դատախազի և 3 պետծառայողի նկատմամբ ավարտվել է, 3 ուսումնասիրություն 3 դատախազի նկատմամբ դադարեցվել է, 1 ուսումնասիրություն 2 դատախազի նկատմամբ կասեցվել է, որը տեղափոխվել է 2013 թվական, ինչը կազմում է հաշվետու ժամանակաշրջանում միջինը 333 հաստիք զբաղեցրած դատախազների 19,2 %-ը:

Ավարտված ուսումնասիրությունների արդյունքներով 29 դեպքով՝ 41 դատախազի և 3 պետծառայողի կողմից ծառայողական և դատախազի հիմնական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, դատախազի մասնագիտական վարքագծի կանոնների պահանջների խախտումներ թույլ տալու հետ կապված հարցերը քննարկվել են ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում և ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերում և ընդունված որոշումների համաձայն դատախազները, այդ թվում՝ ղեկավար (վերադաս) դատախազները, նախազուշացվել են ու նրանց ուշադրությունը հրավիրվել է թույլ տրված համապատասխան թերությունների ու բացթողումների վրա՝ անհրաժեշտ հետևություններ անելու և այսուհետ դրանք բացառելու համար, որը կազմում է ուսումնասիրության տակ գտնված դատախազների 64,1%-ը և դեպքերի 53,7%-ը:

21 դեպքով՝ 18 դատախազի նկատմամբ ուսումնասիրությունների արդյունքներով նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել:

2012թ. վերահսկողության է վերցվել ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից հսկողության վերցված 2170 (2011թ.՝ 2195) դիմում-բողոքով տրված

հանձնարարական: Այդ բնագավառում միայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից ստացվել է 108 (2011թ.՝ 123) դիմում, որոնց տրվել են պատասխաններ:

ՀՀ դատախազության համակարգում կատարված դատախազական աշխատանքի, դատախազական ներգործության միջոցների կիրառման և դատախազական ակտերի կայացման առումով, նախորդ համապատասխան ժամանակաշրջանների մասն, ամփոփվել են նյութերով քրեական գործի հարուցումը վերացնելու, քրեական գործ հարուցելու, քրեական գործերի վարույթները կարճելու, կասեցնելու, քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշումները վերացնելու, նյութերով և քրեական գործերով տրված գրավոր ցուցումների, դատախազների կողմից պատկան մարմիններին ու կազմակերպություններին ուղարկած միջնորդագրերի, հաղորդումների, միջնորդությունների (այդ թվում՝ հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու մասին և այլն) և քննիչների ամսական ծանրաբեռնվածության ցուցանիշները, որոնց արդյունքներով կազմվել են համապատասխան վերլուծական նյութեր, ինչպես նաև կազմվել է կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դատախազի ամսական միջին ծանրաբեռնվածությունը և դրա հիման վրա արվել են համապատասխան հետևություններ (հաստիքների վերադասավորում՝ ուժերի հավասարաչափ բաշխման նպատակով և այլն):

Ընդունելի համարելով հետաքննության և նախաքննության մարմինների հետ ամենօրյա աշխատանքներ տանելու, նրանց աշխատանքային կարգով ուղղություններ տալու և նրանց գործունեությունը մշտապես հսկողության տակ պահելու ոլորտում ձևավորված պրակտիկան՝ պետք է նկատի ունենալ, որ դատախազի աշխատանքի արդյունքների դրսևորման օրենքով սահմանված միակ կառուցակարգը հենց դատախազական ներգործության միջոցների կիրառման և դատախազական ակտերի կայացման գործընթացն է, ինչը ՀՀ Նախագահը հատկապես կարևորեց իրավապահ մարմինների ղեկավարների հետ 29.10.2012թ. անցկացված խորհրդակցության ընթացքում:

Այս առումով գրանցվել են հետևյալ վիճակագրական արդյունքները. 2012թ.-ին վարույթում եղած 11.233 քրեական գործերով տրվել է 1.506 (2011թ.՝ 1686) գրավոր ցուցում, որը կազմում է վարույթում եղած գործերի 13,4%-ը, իսկ ավարտված քրեական գործերի 30,5%-ը:

Ավարտված 27735 (2011թ.՝ 25892) նյութով տրվել է 780 ցուցում:

Վերացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին 117 (2011թ.՝ 111), իսկ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին 117 (2011թ.՝ 114) որոշում:

Հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ է տրվել 266 (2011թ.՝ 166) իրավախախտում:

ՀՀ նախաքննության մարմինների կողմից ՀՀ քր. դատ. օր.-ի 200-րդ հոդվածի կարգով քրեական գործերով 2012թ.-ին ներկայացվել է 521 (2011թ.՝ 606) միջնորդագիր: Դատախազների կողմից 2012թ.-ին ներկայացվել է 198 միջնորդագիր:

Վերը նշված խորհրդակցության արդյունքում 2012թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ Նախագահի կողմից տրվել է «Քրեական գործերով մինչդատական վարույթին առնչվող հիմնախնդիրների լուծման, իրավապահ մարմինների աշխատակիցների նյութատեխնիկական և սոցիալական ապահովության վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը լրամշակելու մասին» N ՀՆԱ-10 հանձնարարականը (այսուհետ՝ **հանձնարարական**), իսկ ՀՀ Նախագահի օգնականի կողմից՝ 01.11.2012թ. N ՆՕ-1935 գրությունը (այսուհետ՝ **գրություն**):

Ի կատարումն հանձնարարականի 3-րդ և 4-րդ կետերի ու գրության պահանջների՝ 02.11.2012թ. կայացել է ՀՀ դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստ՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների, բաժինների պետերի, նրանց տեղակալների, վարչությունների և բաժինների ավագ դատախազների ու դատախազների, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազների, նրանց տեղակալների, դատախազությունների ավագ դատախազների և դատախազների, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդակցականների և

օգնականի, ՀՀ գլխավոր դատախազի մամուլի քարտուղարի, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի, ՀՀ ԿԱ ոստիկանության պետի տեղակալի, ՀՀ ԿԱ ոստիկանության քննչական գլխավոր վարչության պետի, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետի, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետի, ՀՀ ոստիկանության ԿՀԳՊ ԳՎ պետի, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության բաժինների պետերի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրենի, ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի տնօրենի, ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի տնօրենի, ՀՀ առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի նախագահի, ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի մասնակցությամբ, որի արդյունքներով կազմվել է արձանագրություն և կայացվել համապատասխան որոշում:

Մինչև ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ դատախազության կոլեգիայի որոշման կենսագործումը՝ իրականացվել են նաև այլ միջոցառումներ: Մասնավորապես.

1. ՀՀ գլխավոր դատախազի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալների 05.11.2012թ. N 15/6-12 և 30.11.2012թ. N 2/18-01-12 հանձնարարականները:

2. Լրացուցիչ ստուգվել են վերադաս դատախազների կողմից ստորադաս դատախազների գործունեության նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 104-րդ, 34-104-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ 2011-2012թթ. քննված քրեական գործերով իրականացված փաստացի կատարված աշխատանքները, որոնց արդյունքներով հայտնաբերված խախտումների, բացթողումների կապակցությամբ իրականացվում են համապատասխան ուսումնասիրություններ և կարգապահական վարույթներ:

3. Դատախազների կողմից նյութերով և քրեական գործերով տրված գրավոր ցուցումների, դատախազական ներգործության մյուս միջոցների, դրանց բողոքարկման, ինչպես նաև բողոքարկման արդյունքների հստակ հաշվառումն ապահովելու նպատակով, համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության ձևում, որոնց հիման վրա 2012թ. տարեկան աշխատանքների ամփոփման ու հետագա կիսամյակային և տարեկան աշխատանքների ամփոփման վերաբերյալ ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների, դատախազությունների և առանձին դատախազների վիճակագրական հաշվետվությունները կներկայացվեն վերը նշված թվային տվյալների ընդգրկումով, ինչն էլ հնարավորություն կտա այդ մասով համապատասխան վերլուծություն և ամփոփումներ կատարելու:

4. Նույն փոփոխությունը կատարվել է նաև ՀՀ գլխավոր դատախազի 2011 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների կիսամյակային և տարեկան աշխատանքների արդյունքների ամփոփման սահմաններն ընդգծելու և համապատասխան դատախազությունների կառուցվածքային ստորաբաժանումների ու դատախազների կողմից կազմվող և ներկայացվող կիսամյակային ու տարեկան աշխատանքների մասին զեկուցագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 30 հրամանով հաստատված հավելվածով նախատեսված՝ դատախազի, առանձին դատախազությունների և կառուցվածքային ստորաբաժանումների կիսամյակային և տարեկան աշխատանքի արդյունքների վերաբերյալ տեքստային հաշվետվությունում, զեկուցագրերի օրինակելի ձևում, որտեղ վիճակագրական տվյալների հետ պետք է վերլուծություն կատարվեն տրված գրավոր ցուցումների, հանձնարարականների, դատախազական ներգործության մյուս միջոցների կիրառման, դրանց բողոքարկման, այդ ամենի անհրաժեշտության, պատճառների և արդյունքների մասին:

5. ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հուլիսի 20-ի «Դատախազների թեկնածությունների ցուցակը համարելու համար անցկացվող բաց մրցույթի հարցաշարը

հաստատելու և ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունվարի 29-ի «Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման կարգը սահմանելու և հարցաշարը հաստատելու մասին» N 8 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 77 հրամանը և դրանով հաստատված հավելվածը դրվել են ներքին շրջանառության մեջ՝ հրամանում նշված օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների և լրացումների հետևանքով հարցաշարերում, ինչպես նաև որակավորման հանձնաժողովի գործունեության կարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ կարծիքներ ու առաջարկություններ ներկայացնելու և, ըստ այդմ, նոր հարցադրումներ մշակելու և գործող կարգը կատարելագործելու համար:

Ի կատարումն հանձնարարականի 3-րդ և 4-րդ կետերի ու գրության պահանջների՝ 07.11.2012թ.-ին անցկացվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր ընդլայնված խորհրդակցություն՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների, բաժինների պետերի, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազների, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականների և օգնականի, ՀՀ գլխավոր դատախազի մամուլի քարտուղարի, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի, ՀՀ ԿԱ ոստիկանության պետի տեղակալի, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության պետի, ՀՀ ԿԱ ոստիկանության ԶԳՎ հատկապես կարևոր գործերի քննության վարչության պետի, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետի, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետի, ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության պետի տեղակալի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրենի, ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի տնօրենի, ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոնի տնօրենի, ՀՀ ԿԱ ոստիկանության փորձաքննագիտական վարչության պետի, ՀՀ առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի նախագահի, ՀՀ առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի նախագահի, ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի մասնակցությամբ, որի արդյունքներով կազմվել է համապատասխան արձանագրություն և տրվել են հանձնարարականներ:

Ի լրումն նախորդ միջոցառումների, ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան հանձնարարական է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների, բաժինների պետերին, Երևան քաղաքի դատախազին՝ պահանջելով հանգամանորեն ուսումնասիրել, քննարկել հանձնարարականը և ըստ քննարկման արդյունքների ներկայացնել օրենսդրական կամ իրավական կարգավորման, ինչպես նաև կազմակերպական-կառուցվածքային բնույթի առաջարկներ:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների նման շարունակում են իրականացվել դատախազների կողմից վերլուծական աշխատանքի վարման և ՀՀ դատախազության կոլեգիայի առանձին որոշումներով պայմանավորված՝ աշխատանքային ծրագրերով նախատեսված և առանձին կետերով հանձնարարված ամփոփումները, որոնց կապակցությամբ արձանագրված թերություններն ու բացթողումները մշտապես քննարկվում են տարբեր մակարդակներով, արվում համապատասխան հետևություններ, ինչպես նաև սահմանվում դատախազության գործունեության կազմակերպման և լիազորությունների իրականացման կատարելագործմանն ուղղված կառուցակարգերը:

ՀՀ դատախազությունը համագործակցել է մյուս գերատեսչությունների հետ, ավարտվել են ՀՀ Նախագահի 21.04.2009թ. N ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված 2-րդ հավելվածի (Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների ցանկի)՝ ՀՀ դատախազությանը վերաբերող միջոցառումները: Դրանցից մի քանիսը, ըստ

անհրաժեշտության, տեղափոխվել և ի թիվս այլ հրատապ միջոցառումների, ընդգրկվել են ՀՀ Նախագահի 30.06.2012թ. N ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի և ծրագրից բխող միջոցառումների ցանկում», որի արդյունավետ իրականացումն ապահովելու համար ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան հրամանով ըստ տարբեր ժամանակահատվածների սահմանվել են միջոցառումների իրականացման ժամկետներն ու պատասխանատուները:

Բացի այդ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ սերտ համագործակցության շրջանակներում միջազգային փորձագետների կողմից իրականացվել են վերջին տարիներին ՀՀ դատախազության համակարգում իրականացված իրավակազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների դիտարկումներ, որոնց արդյունքներով, ընդհանուր առմամբ, դրական գնահատական է տրվել կատարված աշխատանքներին, նախանշվել են մի քանի բնագավառներում սկսված բարեփոխումների և այլ մարմինների ու կազմակերպությունների հետ համագործակցության կառուցակարգերը:

Համագործակցելով ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համապատասխան ծառայությունների հետ՝ ՀՀ դատախազությունը իրականացրել է ՀՀ Կառավարության 27.03.2008թ. N 1039-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի միջոցառումների» ցանկի՝ 2009-2010թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա համապատասխան միջոցառումները և արդյունքների վերաբերյալ հաղորդում է ուղարկել ՀՀ ԿԱ ոստիկանություն:

Համագործակցելով իրավասու պետական մարմինների և կազմակերպությունների հետ՝ շարունակաբար իրականացվել են ՀՀ Կառավարության 08.10.2009թ. N 1272-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների ծրագրի միջոցառումների» ցանկում նշված՝ 2009-2011թվականների ընթացքում ՀՀ դատախազության կողմից կատարման ենթակա միջոցառումները և այլն:

ՀՀ և ԼՂՀ դատախազությունների միջև համագործակցության և փոխօգնության մասին համաձայնագիր-հուշագրով ամրագրված գործընթացները գործնականում իրականացնելու նպատակով շարունակվել է համագործակցությունը երկու դատախազությունների միջև՝ տեղեկությունների փոխանակման, մասնագիտական գրականության տրամադրման, համատեղ դասընթացների կազմակերպման և դատախազության գործունեության կազմակերպման ու լիազորությունների իրականացման միասնական կառուցակարգերի սահմանման ոլորտներում:

ՀՀ դատախազությունը շարունակում է իր լիարժեք մասնակցությունը ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի (ԳՂՀԽ) աշխատանքներին՝ արձագանքելով վերջինիս նախաձեռնություններին:

Այս կապակցությամբ թերևս հիշատակման է արժանի ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի գործադիր քարտուղարությունից ստացված՝ Ղազախստանի Հանրապետությունում 2011թ.-ին ներդրված փորձը, համաձայն որի՝ հանցագործությունների գրանցման և հաշվառման գործընթացներն իրականացվում են ոչ թե ոստիկանության, այսինքն՝ միաժամանակ դրանց դեմ պայքարելու և դրանք նախականիսելու լիազորություն ունեցող մարմնի, այլ օրենքով ստեղծված անկախ մարմնի կողմից, որը, ունենալով իր տարածքային (ռեգիոնալ) ստորաբաժանումները, հնարավորություն ունի թղթային և էլեկտրոնային կառավարման համակարգերի կիրառմամբ ապահովելու հանցագործությունների, պատահարների, այլ իրավախախտումների մասին հաղորդումների ու դիմումների տարանջատված գրանցումն ու հաշվառումն ինչպես կենտրոնական մարմնում, այնպես էլ իր տարածքային ստորաբաժանումներում, մշտադիտարկման և վերահսկողական լծակների կիրառմամբ կատարելու մշտական համադրումներ, ըստ անհրաժեշտության տրամադրելու տեղեկություն, իրականացնելու հանցավորության վիճակի, կառուցվածքի և շարժընթացի

համեմատական վերլուծություններ, հանգելու անհրաժեշտ հետևությունների և այլն: Ըստ վերլուծաբանների՝ հիմնականում հիշյալ մեխանիզմի կիրառմամբ է պայմանավորված Ղազախստանում 2011թ. ընթացքում հանցավորության շարժընթացում 2010թ.-ի համեմատ հանցագործությունների բացահայտման թվի աննախադեպ՝ 56,8%-ով աճը: Իսկ 2012թ. 1-ին եռամսյակում գրանցվել է նույն ցուցանիշի աճ 87,6%-ով, ինչն, ըստ հեղինակների, հանցագործությունների գրանցման և հաշվառման գործընթացների կատարելագործման արդյունք է: Իսկ մինչ այդ, նույն Ղազախստանում, այնպես, ինչպես ԱՊՀ մասնակից մյուս պետություններում, արձանագրվել են հանցավորության շարժընթացի աճի կամ նվազման փոփոխական միտումներ: Հիշյալ փորձը ներկայումս ուսումնասիրվում է ՀՀ դատախազության համակարգում:

ՀՀ դատախազությունը համապատասխան աշխատանք է կատարել ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N ՆԿ-96-Ն կարգադրությամբ հաստատված հավելվածի, ՀՀ Կառավարության 2012թ. ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 533 որոշման, ՀՀ Կառավարության 2008թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» N 1039-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, ՀՀ Կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1272-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի «Ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կատարման մասին» N 324-Ն հրամանի, ՀՀ Նախագահի 2012թ. ապրիլի 16-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն- Եվրոպական Միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-52-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածի պահանջների կատարման ուղղությամբ, որից հետո կատարված աշխատանքի վերաբերյալ տեղեկություններն ամփոփվել են և հաշվետվություն է ուղարկվել պատկան մարմիններին:

Միջազգային-իրավական օգնության բնագավառում 2012թ. աշխատանք է կատարվել քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման, ներառյալ՝ քրեական հետապնդման կամ դատավճիռն ի կատար ածելու նպատակով հետախուզվող անձանց հանձնման, երկկողմ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակում համագործակցության և այլ ոլորտներում:

2012թ. ԱՊՀ մասնակից պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու 72 (2011թ.՝ 46), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 41 (2011թ.՝ 51) միջնորդություն, ընդամենը՝ 113 (2011թ.՝ 97) միջնորդություն:

2012թ. քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 49 (2010թ.՝ 45) միջնորդություն, այլ օտարերկրյա պետություններից 32 (2011թ.՝ 59) միջնորդություն, ընդհանուր առմամբ ստացվել է 81 (2011թ.՝ 104) միջնորդություն:

Հանցագործություն կատարած անձանց հանձնման և դատապարտյալների փոխանցման մասին հարցումների նախապատրաստման և ուղարկման կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների ոլորտում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում քննվող քրեական գործերով հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց քրեական պատասխանատվության

ենթարկելու նպատակով Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին հանձնելու վերաբերյալ 69 (2011թ.՝ 82) միջնորդության նախապատրաստում և ուղարկում, որոնցից 60-ը (2011թ.՝ 71) ուղարկվել է ԱՊՀ մասնակից պետությունների, իսկ 9-ը (2011թ.՝ 11) այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը: ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձանց այլ պետությունների տարածքում հայտնաբերման մասին ստացված հեռագրերի հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթները հանգամանալից ուսումնասիրվել են, պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ, անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ: Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում բացառվել են հանձնման միջնորդությունների անհիմն մերժումները: Ներկայացված հանձնման 69 միջնորդությունից 24-ը (2011թ.՝ 35) բավարարվել է, 2-ը (2011թ.՝ 15) մերժվել է, 42-ը (2011թ.՝ 32) քննարկման փուլում է: Նույն ժամանակահատվածում այլ պետությունների իրավասու մարմինների կողմից քննարկվել և բավարարվել է նախկինում ներկայացված ևս 23 (2011թ.՝ 14) միջնորդություն:

2012թ. օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է նրանց իրավապահ մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված անձանց վերաբերյալ 22 (2011թ.՝ 30) միջնորդություն, որոնցից 15-ը ԱՊՀ մասնակից պետությունների, իսկ 7-ը՝ օտարերկրյա պետության իրավասու մարմիններից: Ստացված 22 միջնորդությունից 1-ը բավարարվել է, հիմնականում քաղաքացիության հիմքով մերժվել է 11 միջնորդություն, 4-ը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 6-ը քննարկման փուլում է:

2012թ. հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 115 (2011թ.՝ 109) անձի վերաբերյալ: Հայտնաբերված հետախուզվողների քաղաքացիությունը պարզելու նպատակով հարցումներ են կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, անմիջապես տեղեկացվել է հետախուզման նախաձեռնողը, պահանջվել են հանձնման փաստաթղթեր, իսկ ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնելու նպատակով պահանջվել են հարուցված քրեական գործերը:

Քրեական հետապնդում իրականացնելու հանձնարարությամբ այլ պետությունների իրավապահ մարմիններին ուղարկվել են 34 (2011թ.՝ 24) քրեական գործ և նյութեր, որոնցից 28-ն ուղարկվել է ԱՊՀ իրավասու մարմիններին, իսկ 6-ը այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին:

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդության հիման վրա ստացվել են 11 (2011թ.՝ 19) քրեական գործ և նախապատրաստված նյութեր, որոնցից 7-ը՝ ԱՊՀ, իսկ 4-ը՝ այլ օտարերկրյա պետության իրավասու մարմիններից:

2012թ. կազմակերպվել է այլ պետությունների դատախազությունների, իրավապահ այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ու պատվիրակությունների շուրջ 60 հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալների հետ, այդ թվում՝ կազմակերպվել են Բավարիայի արդարադատության նախարար պարոն Հելմուտ Փալդերի, ՌԴ գլխավոր դատախազ պարոն Յու. Չայկայի, ՉԺՀ գլխավոր դատախազ պարոն Յաո Չյանմինի կողմից ղեկավարած պատվիրակությունների այցերը ՀՀ: ՉԺՀ գլխավոր դատախազ պարոն Յաո Չյանմինի այցի ընթացքում, ի կատարումն 1999թ. սեպտեմբերի 9-ին Պեկինում կնքված «ՀՀ և ՉԺՀ գլխավոր դատախազությունների միջև համագործակցության մասին» համաձայնագրի, ՀՀ և ՉԺՀ գլխավոր դատախազների կողմից 2012թ. հունիսի 11-ին Երևանում ստորագրվել է երկու դատախազությունների միջև կոնկրետ միջոցառումներ նախատեսող համագործակցության ծրագիր, որի առաջին կյոբ սեղանը՝ «Հանցավոր նպատակներով ինտերնետի օգտագործման հակազդման պրակտիկան և հիմնախնդիրները: Դատախազության դերը կիբերհանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության կոորդինացման բնագավառում» թեմայով

հաջողությամբ կազմակերպվել և անցկացվել է 2012թ. հոկտեմբերին, Երևանում: Արդիական և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ծրագրով նախատեսված ևս երկու միջոցառում պլանավորված է անցկացնել 2013 թվականին:

Եվրոպայի գլխավոր դատախազների խորհրդատվական խորհրդի 7-րդ համաժողովի նախապատրաստման նպատակով 2012թ. տեղի է ունեցել աշխատանքային խմբի հանդիպում Ստրասբուրգում, որի ընթացքում քննարկվել է ԵԽ անդամ-պետությունների կողմից «Դատախազության միջոցների կառավարման մասին» ԵԴԽԽ կարծիք 7-ի նախագիծը, որի լրամշակված տարբերակն ընդունվել է 2012 թվականի նոյեմբերի 25-ին: Այժմ փաստաթուղթը թարգմանվում է հայերեն լեզվով և կտեղակայվի ՀՀ դատախազության կայքում:

2012 թվականին ապահովվել է ՀՀ գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակության մասնակցությունը Սանկտ Պետերբուրգում կայացած ԱՊՀ գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի արտահերթ նիստին, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գլխավորած պատվիրակությունների մասնակցությունը Կիևում (Ուկրաինա) կայացած ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների հերթական նիստին և 2012 թվականի նոյեմբերի 25-ից 28-ը Ստամբուլում (Թուրքիա) կայացած Դատախազների միջազգային 15-րդ ֆորումին:

Ի կատարումն Ռումինիայի գլխավոր դատախազության հետ համագործակցության ակտիվացման մասին 2010 թվականի սեպտեմբերին կնքված Հուշագրի՝ նախապատրաստվում է Ռումինիայի գլխավոր դատախազի փոխադարձ այցը Հայաստանի Հանրապետություն: Այցի ընթացքում կքննարկվեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր, կնախանշվեն փոխգործակցության հետագա առաջնահերթությունները:

Բազմաթիվ ձեռքբերումներ է արձանագրել 2008 թվականի դեկտեմբերի 9-ին Ստեփանակերտ քաղաքում երկու պետությունների գլխավոր դատախազների կողմից կնքված՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին» Համաձայնագիր-հուշագիրը, որի իրականացման նպատակով լրամշակվել է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազությունների միջև համագործակցության ծրագիրը, որը կկնքվի Երևանում:

2012թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով համաձայնություն է ձեռք բերվել ԻԻՀ գլխավոր դատախազի հետ կնքելու երկու պետությունների դատախազությունների միջև համագործակցության հուշագիր: Այցի ընթացքում կքննարկվեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր, կնախանշվեն փոխգործակցության հետագա առաջնահերթությունները:

Միջազգային-իրավական կապերի բաժնի դատախազներն ակտիվորեն մասնակցել են Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի 23.11.2010թ. որոշմամբ ստեղծված՝ քրեաիրավական ոլորտից դուրս դատախազների լիազորությունների հետ կապված փորձագետների խմբի նիստերի աշխատանքներին, որի ընթացքում մշակվել է քրեաիրավական ոլորտից դուրս դատախազների լիազորությունների վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի երաշխավորությունների նախագիծը, որն ընդունվել է ԵԽ նախարարների կոմիտեի կողմից 2012թ. սեպտեմբերի 19-ին: Միջազգային-իրավական կապերի բաժնի կողմից փաստաթուղթը ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին՝ ի գիտություն:

2012թ. հոկտեմբերի 4-7-ը ՀՀ գլխավոր դատախազության պատվիրակությունը մասնակցել է Մալայզիայի Կուալա-Լումպուր քաղաքում կայացած Հակակոռուպցիոն կառույցների միջազգային ասոցիացիայի 6-րդ տարեկան համաժողովին, որը վերաբերում էր ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 6-րդ բաժնով նախատեսված հանցավորության դեմ պայքարում տեխնիկական աջակցությանը և տեղեկատվության փոխանակմանը:

2012թ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել իր համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարի

մշտական ներկայացուցչի գրասենյակի, ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի, ԵԱՀԿ-ի, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների Միջազգային Ասոցիացիայի, Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ՀՀ դատախազությունն իրավական ապահովման ոլորտում իրականացրել է տարբեր իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքներ:

2012թ. մշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործելու ՀՀ օրենսդրությունը և բարելավելու ՀՀ դատախազության գործունեությունը: Այդ նպատակով մշակվել կամ վերամշակվել է 21 (2011թ.՝ 18) օրենսդրական ակտի նախագիծ: Այդ թվում՝ նախապատրաստվել են «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր:

2012թ. ստացվել են 43 (2011թ.՝ 87) օրենքի, Կառավարության որոշման 11 (2011թ.՝ 17) նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան կարծիքներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծերի վերաբերյալ:

Անճնակազմի հետ տարվող աշխատանքների ոլորտում ՀՀ դատախազությունը

2012թ. դատախազության համակարգի աշխատակիցների վերաբերյալ նախապատրաստել և ՀՀ գլխավոր դատախազի ու ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների ստորագրմանն է ներկայացրել 1395 (2011թ.՝ 1141) հրամանի նախագիծ, որոնցից 534-ը (2011թ.՝ 493)՝ արձակուրդի, 508-ը (2011թ.՝ 356)՝ գործուղման վերաբերյալ:

01.01.2013թ.-ի դրությամբ ՀՀ դատախազությունն ունի 337 հաստիքային միավոր: 2012թ. աշխատանքի է ընդունվել 29 (2011թ.՝ 21) աշխատակից: 01.01.2013թ.-ի դրությամբ թափուր է եղել 18 (2011թ.՝ 10) հաստիք: ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 103 (2011թ.՝ 58) աշխատակից տեղափոխվել է տարբեր պաշտոնների: 34 (2011թ.՝ 27) աշխատակից ազատվել է աշխատանքից:

2012թ. անցկացվել է ՀՀ դատախազության աշխատակիցների որակավորման հանձնաժողովի 16 (2011թ.՝ 23) նիստ: Լսվել է 71 (2011թ.՝ 112) աշխատակցի զնահատագիր, որոնցից 65-ի (2011թ.՝ 98) նկատմամբ կայացվել են զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու, 4-ի (2011թ.՝ 9) նկատմամբ՝ դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ որոշումներ, իսկ 2 (2011թ.՝ 4) դատախազի նկատմամբ՝ «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին»՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով որոշում:

2012թ. կազմվել և ՀՀ գլխավոր դատախազի ստորագրմանն են ներկայացվել խրախուսման վերաբերյալ մի շարք հրամանների նախագծեր, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդություններ՝ ՀՀ Նախագահին, Վարչապետին և այլ գերատեսչական կառույցների ղեկավարներին՝ մի շարք աշխատակիցներին խրախուսելու վերաբերյալ:

2012թ. հերթական դասային աստիճան է շնորհվել 71 (2011թ.՝ 70) աշխատակցի:

2012թ. «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում վերապատրաստման դասընթացին մասնակցել է 316 (2011թ.՝ 265) դատախազ:

Կազմակերպվել է տարբեր բուհերի 60 (2011թ.՝ 56) ուսանողի արտադրական պրակտիկայի անցկացումը ՀՀ դատախազության ստորաբաժանումներում:

ՀՀ գլխավոր դատախազության 2012թ. 2-րդ կիսամյակի աշխատանքի ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ ուսումնասիրվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների, Արարատի, Շիրակի և Սյունիքի մարզերի դատախազություններում, Երևանի, Լոռու և Թիվ 2 կայազորների զինվորական դատախազություններում դատախազների նյութակենցաղային պայմանների և սոցիալական ապահովության վիճակը: Ամփոփման արդյունքները ներկայացվել են ՀՀ դատախազության կոլեգիայի քննարկմանը, որի համապատասխան որոշմամբ հանձնարարվել է լրացուցիչ ուսումնասիրել և ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի քննարկմանը՝ բարձրացված հարցերին աշխատանքային կարգով համապատասխան լուծումներ տալու համար:

2012թ. աշխատանքներ են կատարվել **ՀՀ դատախազությունում ստացված դիմումներն ու բողոքները** սահմանված ժամկետում քննարկելու, դիմումների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու, տեղ գտած թերություններն ու խախտումները վերացնելու, ինչպես նաև քաղաքացիների ընդունելությունը բարելավելու ուղղությամբ:

2012թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 11333 (2011թ.՝ 11016) դիմում-բողոք, որոնցից 3084-ը (2011թ.՝ 2855) եղել է կրկնակի, 510-ը (2011թ.՝ 504) բավարարվել է, 788-ը (2011թ.՝ 781) մերժվել է, 3637-ը (2011թ.՝ 3689) ուղարկվել է այլ մարմին, 15 (2011թ.՝ 23) անանուն դիմում թողնվել է առանց քննարկման, 158-ը (2011թ.՝ 161) մնացել է անավարտ, 5-ը (2011թ.՝ 2) վերադարձվել է հեղինակներին, 54-ը (2011թ.՝ 73) թողնվել է առանց պատասխանի, 26-ը (2011թ.՝ 31) թողնվել է առանց լուծման, 85-ի (2011թ.՝ 81) թղթակցությունը դադարեցվել է, 1983-ի (2011թ.՝ 2202) տրվել է պարզաբանում, 4023-ը (2011թ.՝ 3456) ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում, 49-ի քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ:

ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է 2442 (2011թ.՝ 2390) քաղաքացու ընդունելություն, որոնցից ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների մոտ ընդունելության է ներկայացել 122 (2011թ.՝ 119) քաղաքացի: Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի 01.08.2007թ. N 53 հրամանի 13.07.2004թ. N 277 հրամանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պահանջի՝ ընթացք է տրվել նաև բռնադատվածների վերաբերյալ դիմումներին, որի կապակցությամբ ընդհանուր հաշվով 42 (2011թ.՝ 36) քաղաքացուց ստացվել է 46 (2011թ.՝ 41) դիմում, որոնցից 4-ը (2011թ.՝ 5) կրկնակի: 28-ի (2011թ.՝ 17) խնդրանքը բավարարվել է, նրանց տրվել է բռնադատված կամ բռնադատվածի առաջին հերթի ժառանգ լինելու մասին տեղեկանք, 1 (2011թ.՝ 3) դիմումով խնդրանքը մերժվել է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, 16-ով (2011թ.՝ 16) տրվել է պարզաբանում, 1-ն ուղարկվել է դատախազության այլ ստորաբաժանում:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

2012թ. շարունակվել է համագործակցությունը ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից ստեղծված շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների հետ (ՇՊԱԿ), որի շրջանակներում 2012թ. ընթացքում ստացվել է 49 (2011թ.՝ 31) դիմում, որոնց ընթացքը լուծվել է սահմանված կարգով:

2012թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության մասով **ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներն** իրականացրել են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում քննված 204 (2011թ.՝ 193) քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն, որոնցից 21-ը փոխանցվել է նախորդ տարվանից, իսկ վարույթ է ընդունվել 183-ը:

2012թ. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ընթացք է տրվել 279 (2011թ.՝ 216) նյութի:

279 նյութից 42-ով (2011թ.՝ 34) հարուցվել են քրեական գործեր, 186-ով (2011թ.՝ 123) քրեական գործի հարուցումը մերժվել է, 34-ն (2011թ.՝ 17) ուղարկվել է այլ մարմին, 7-ը (2011թ.՝ 26) կցվել է քրեական գործերին, իսկ 10-ն ընթացքում է: Քրեական գործի հարուցումը մերժված 186 նյութից 143-ով հարուցումը մերժվել է արդարացման, իսկ 43-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2012թ. ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթում քննվել է 204 քրեական գործ, որոնցից 21-ը փոխանցվել է նախորդ տարվանից, իսկ վարույթ է ընդունվել 183-ը: Վարույթ ընդունված քրեական գործերից ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է 65-ը, այլ մարմիններից ստացվել է 116-ը (այդ թվում՝ ՀՀ ոստիկանության քննչական մարմիններից՝ 95-ը, ՀՀ ԿԱ ԱՍԾ-ից՝ 3-ը, ՀՀ գլխավոր դատախազությունից՝ 9-ը, ՀՀ ՊՆ-ից՝ 6-ը, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից՝ 3-ը), վերսկսվել է նախկինում կասեցված քրեական գործերից 2-ը:

Վարույթում քննված 204 քրեական գործից 50-ը եղել է պետական ծառայության, 26-ը՝ կյանքի ու առողջության, 1-ը՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության, 51-ը՝ սեփականության, 9-ը՝ հասարակական կարգի և բարոյականության, 13-ը՝ հասարակական անվտանգության, 9-ը՝ տնտեսական գործունեության, 18-ը՝ կառավարման կարգի, 7-ը՝ բնակչության առողջության, 2-ը՝ անձի ազատության, պատվի և արժանապատվության, 15-ը՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների, 2-ը՝ շրջակա միջավայրի անվտանգության, 1-ը՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ:

Վարույթում քննված 204 քրեական գործից ավարտվել է 96-ը, որոնցից 62-ը 104 անձի (2011թ.՝ 69 գործ, 131 անձ) նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 34-ը կարճվել է, 13-ը կասեցվել է, 74-ը ուղարկվել է այլ մարմին, 14-ը միացվել, 7-ը մնացել է անավարտ:

Ավարտված քրեական գործերով պատճառված 10.263.324.840 (2011թ.՝ 4.786.429.882) դրամ վնասից նախաքննության ընթացքում վերականգնվել է 36.594.000 (2011թ.՝ 908.711.882) դրամը կամ 0,35%-ը (2011թ.՝ 22,7%):

Դատի տրված 72 անձից դատապարտվել է 69-ը, 2-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է համաներման ակտի հիման վրա, 1-ն արդարացվել է: Դատապարտված 69 անձից 43-ի կամ 62,3%-ի նկատմամբ նշանակվել է ազատազրկում, 2-ի կամ 2,9%-ի նկատմամբ՝ կալանք, 10-ի կամ 14,5%-ի նկատմամբ՝ տուգանք, իսկ ազատազրկման դատապարտված 14 անձի կամ 20,3%-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան:

2012թ. դատարաններում ավարտված 72 անձի վերաբերյալ 41 քրեական գործից դատական քննության արագացված կարգ կիրառվել է 20 գործով՝ 27 անձի վերաբերյալ:

Դատի տրված 22 պաշտոնատար անձից, ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների, 18-ը եղել են ոստիկանության աշխատակիցներ (այդ թվում՝ քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ, Երևան քաղաքի վարչության բաժանմունքի պետ, տարածքային բաժնի պետ, տարածքային բաժինների պետերի 3 տեղակալ, 2 քննիչ, 2 տեղամասային տեսուչ, հետաքննության բաժանմունքի տեսուչ, ՊՊԳՎ ՀԶՊ գնդի 4 ոստիկան, ճանապարհային ոստիկանության ՀԶԲ պետի տեղակալ, կադրերի ռեգերվում գտնվող ՃՈ վաշտի հրամանատարի նախկին տեղակալ և անձնագրային բաժանմունքի մասնագետ), 1-ը՝ ՏԻՄ-ի (մարզպետարանի) աշխատակից, 1-ը՝ ՔԿՀ աշխատակից, 2-ը՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության աշխատակիցներ (այդ թվում՝ բաժնի պետ և հարկադիր կատարող):

ՀՀ դատախազությունը որոշակի դրական աշխատանք է կատարել **հրապարակայնության և հանրային իրազեկման ապահովման ոլորտում**, մասնավորապես՝ համագործակցել է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, մասնակցել է 139 սեմինար-քննարկումների, այդ թվում՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան քաղաքական բաժնի աշխատակիցների հետ հանդիպմանը, որտեղ քննարկվել են 2012թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների ընթացքում ՀՀ դատախազության, ՀՀ իրավապահ մարմինների դերակատարման և լիազորությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպմանը ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան մասնակցության և համագործակցության հարցեր, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության և Եվրոպական Միության կողմից կազմակերպված «Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների վիճակը» թեմայով աշխատաժողովին, հակահաբեկչական ռազմավարության հարցերին նվիրված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի լիազույնար նիստին, Սանկտ Պետերբուրգ քաղաքում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների կորդինացիոն խորհրդի արտահերթ նիստին, Չինաստանի Դալիան քաղաքում ՄԱԿ-ի կողմից կազմակերպված «Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայով» նախատեսված «Ակտիվների վերադարձի» հարցով անցկացված խորհրդակցությանը, Ժնևում ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի 48-րդ նստաշրջանի ընթացքում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների քննարկմանը, Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում Եվրախորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի գնահատման /ՄԱՆԻՎԱԼ/ հանձնաժողովի հերթական՝ 40-րդ լիազույնար նիստին և այլն:

Հանրային իրազեկման ոլորտում նույնպես կատարվել են մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես՝ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և հեռուստաընկերությունների հետ համագործակցության շրջանակներում պատրաստվել ու եթեր են հեռարձակվել, ինչպես նաև ՀՀ դատախազության պաշտոնական կայքում տեղադրվել են ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող 96 (2011թ.՝ 53) տեսահոլովակ, տեսանյութ և ֆիլմեր: ՀՀ դատախազության պաշտոնական կայքում հրապարակվել է 2527 (2011թ.՝ 1481) հաղորդագրություն կամ մամուլի հրապարակումների հերթում:

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ դպրոց) իրականացրել է 2012թ. վերապատրաստման ցուցակում ընդգրկված 318 (2011թ.՝ 315) դատախազի տարեկան վերապատրաստում՝ 17 խմբով: Յուրաքանչյուր խմբում ընդգրկված է եղել 17-25 դատախազ, տարեկան վերապատրաստում չի անցել 2 դատախազ՝ ուսումնառությանը չներկայանալու պատճառով: Լրացուցիչ վերապատրաստում է անցել 1 ունկնդիր: Դատախազության ղեկավար կազմի վերապատրաստումը իրականացվել է դրսևկության եղանակով: Տարեկան վերապատրաստման ենթակա 271 (2011թ.՝ 265) դատախազից 13-ը անցել է կրկնակի վերապատրաստում: Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 10 անձից մասնագիտական պատրաստում է անցել 9-ը:

Կրթական ծրագրերով նախատեսված ուսումնական գործընթացներն իրականացվել են դասախոսությունների, գործնական պարապմունքների, դասախաղերի, դատախաղերի, սեմինարների, խնդիրների, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճիռների, Վճռաբեկ դատարանի որոշումների հիման վրա քննարկումներ և բանավեճեր կազմակերպելու միջոցով:

Դպրոցն ապահովել է ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրերի իրականացումը: Մասնավորապես, ներդրված էլեկտրոնային ուսուցումը ծրագրերի այնպիսի համակարգ է, որը, համակարգիչների միջոցով, դասախոսի օգնությամբ կամ առանց նրա, ներկայացնում և ուսուցանում է որոշակի թեմա կամ թեմաներ՝ տարբեր մակարդակներով, յուրաքանչյուր

ունկնդրին ապահովում անհատական մոտեցում, մատուցվող նյութի մատչելիություն և ընկալման բարձր հնարավորություն:

Դասընթացների ժամանակ վերապատրաստվողներին տրամադրվել են վերապատրաստման նյութեր, գիտագործնական ձեռնարկներ, մենագրություններ և այլն:

Դասընթացներն անցկացվել են ինչպես դպրոցի աշխատակիցների, այնպես էլ վերապատրաստման դասընթացներին ժամավճարային կարգով որպես դասախոսներ ներգրավված՝ տարբեր հաստատություններում դասավանդող իրավաբան-մասնագետների և դատախազության փորձառու աշխատակիցների կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը հրատարակել է ՀՀ գլխավոր դատախազության մարդու ղեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից պատրաստված «2010-2011թթ. ընթացքում մարդու առևտրի (թրաֆիքինգի) փաստով հարուցված քրեական գործերի նախնական քննության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարաններում մեղադրանքի պաշտպանության հիմնախնդիրները», «Խոշտանգումների մասին հաղորդումների քննությունը, եվրոպական չափանիշները, երաշխիքները և չափորոշիչները» խորագրերով ձեռնարկները:

Էլեկտրոնային ուսուցման գործընթացի շրջանակում ստեղծվել են հետևյալ ուսումնական 7 ֆիլմերը՝ «Ապացույց և արդար դատաքննություն», «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ», «Նախնական քննության ընթացքում թույլ տրվող տիպային խախտումները», «Թրաֆիքինգ, շահագործում՝ անձի օրգանը վերցնելու ձևով», «Կոգնիտիվ (ճանաչողական) հարցաքննություն», «Մարդկանց առևտրի հետ կապված հանցագործությունների քննության միջազգային մեթոդները», «Մարդկանց առևտրից ստացված հանցավոր եկամուտների օրինականացման ղեմ պայքարը»:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցը համագործակցել է միջազգային հեղինակավոր կառույցների և փորձագետների հետ:

Ներկայումս դպրոցում աշխատանքներ են տարվում վերապատրաստման գործընթացների ընդլայնման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Նախատեսվում է շարունակել գիտագործնական միջոցառումների կազմակերպման ու անցկացման, իրավաստեղծ գործունեության, գիտագործնական ձեռնարկների կազմման և հրատարակման աշխատանքները, ինչպես նաև դպրոց ներմուծել ուսուցման նոր մեթոդներ ու միջոցներ: Վերապատրաստման ծրագրերում նոր էլեկտրոնային մեթոդների և ժամանակակից սարքավորումների ներդրումը թույլ կտա կազմակերպելու դատախազության աշխատակազմի վերապատրաստման և մասնագիտական պատրաստման առավել արդյունավետ ու մատչելի դասընթացներ: Բացի այդ, առաջիկայում, դպրոցը, ՀՀ իրավապահ ոլորտի այլ մասնագետների վերապատրաստման և մասնագիտական պատրաստման համար ունենալով եվրոպական չափանիշներին համապատասխան նյութատեխնիկական և մասնագիտական բազա, կիրականացնի պատշաճ մակարդակի արդյունավետ ուսուցում:

2013թ. ընթացքում դպրոցը ծրագրում է անցկացնել դատախազների և հետաքննության ու նախաքննության մարմինների աշխատակիցների համատեղ վերապատրաստում:

Դատախազության 2012 թվականի գործունեության արդյունքները քննարկվել և ամփոփվել են Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2012 թվականի փետրվարի 12-ի նիստում, որին մասնակցել են ԼՂՀ գլխավոր դատախազը, ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալը, ՀՀ քննչական ծառայությունների և վարչությունների պետերը, իսկ Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների աշխատանքի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների մասնակցությամբ անցկացված խորհրդակցություններում, որտեղ նշվել են դատախազության գործունեության ընթացքում տեղ գտած բացթողումներն ու

թերությունները և դրանց վերացման, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության հետագա բարձրացման ուղղություններն ու միջոցառումները:

Հավաստիացնում եմ, որ շարունակելով իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները, Հայաստանի Հանրապետության դատախազությունը կանի հնարավորինս՝ հանրապետությունում օրինախախտումների դեմ տարվող պայքարին, սահմանադրական և հասարակական կարգի ամրապնդմանն օժանդակելու, պետության, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, ինչպես նաև օրինականության պահպանմանն առնչվող սահմանադրական լիազորություններից բխող մյուս խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, բացահայտելով դատախազական լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման աշխատանքներում տեղ գտած թերություններն ու բացթողումները, ինչպես նաև նկատի ունենալով այդ կապակցությամբ ՀՀ Նախագահի կողմից ներկայացված հանձնարարականների պահանջները, կարվեն դրանցից բխող համապատասխան հետևություններ՝ առավելագույնս ապահովելու հետագա աշխատանքների արդյունավետությունը:

Խորին հարգանքով՝

Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ